ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

26 հուլիսի 2021թ. **N 196-Ա**
ք. Երևան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿԵՆՏՐՈՆ» ԵՎ ԺՈՒՌՆԱԼԻՍՏՆԵՐԻ «ԱՍՊԱՐԵԶ» ԱԿՈՒՄԲ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ԹԻՎ 11 ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 25.06.2021Թ. ԹԻՎ 6-Ա ՈՐՈՇՄԱՆ ԴԵՄ ԴԻՄՈՒՄ-ԲՈՂՈՔԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ուսումնասիրելով «Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» և Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ հասարակական կազմակերպությունների 25.06.2021թ. դիմում-բողոքը (այսուհետ՝ նաև դիմում), որը Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովում (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) մուտքագրվել է 28.06.2021թ.՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Դիմումատուների իրավական դիրքորոշումները և ներկայացված պահանջները

«Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» և Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ հասարակական կազմակերպությունների ներկայացված դիմումում նշված է.

«Թիվ 11 տարածքային ընտրական հանձնաժողովը 25.06.2021թ. կայացրել է թիվ 06-Ա որոշումը, որով մերժվել է «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» և «Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» հասարակական կազմակերպությունների 22.06.2021թ. դիմում-բողոքով վարչական վարույթի հարուցումը:

1. Դիմումը ներկայացված է եղել հետևյալ բովանդակությամբ.

2. Գրիգոր Դավուլճյանը 20.06.2021թ. գտնվել է թիվ 11/34 տեղամասում որպես «Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» հասարակական կազմակերպության դիտորդ: Վերջինիս կողմից դիտարկված խախտումները հետևյալն են. դիտորդը քվեարկության ընթացքում, ժամը 09:30-ից ընդհուպ մինչև 10:30-ը դիտարկել է պարբերաբար ուղորդման դեպքեր «Հայաստան» դաշինքի վստահված անձ՝ Սոս Վանոյանի կողմից: «Հայաստան» դաշինքի նշյալ վստահված անձը հանդիսացել է նաև գյուղապետի տեղակալ, իր՝ քվեարկության ժամանած համագյուղացիներին ընտրատեղամասի մուտքի մոտից ուղորդել է դեպի ընտրատեղամաս և հրահանգել տեղամասում կատարվելիք գործողությունների կապակցությամբ: Դիտորդի (ըստ նրա՝ նաև այլ անձանց) մոտ հստակ ընկալում է ձևավորվել, որ նշված վստահված անձը տեղամասում գտնվում էր, որպեսզի իրագործի իր և համագյուղացիների միջև՝ նրանց քվեարկության մասին նախապես ձեռքբերված համաձայնությունը: Հանձնաժողովի նախագահը տեղեկացվել է խախտման մասին և նրան առաջարկվել է ձեռնարկել համապատասխան գործողություններ, այդ թվում՝ վերացնել խախտումը, սակայն անհրաժեշտ գործողություններ չեն ձեռնարկվել: Վստահված անձը նախազգուշացվել է հանձնաժողովի նախագահի կողմից միայն անհայտ տեղից զանգ ստանալուց հետո: Ավելին, դիտորդի կողմից ներկայացվել է պահանջ խախտման վերաբերյալ գնահատականը տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում

արձանագրելու վերաբերյալ, պահանջը մերժվել է, սակայն հետագայում բավարարվել է ու գրառումը կատարվել:

3. Սիրանուշ Արտակի Փահլևանյանը 20.06.2021թ. գտնվել է թիվ 11/27 ընտրատեղամասում որպես «Ժուռնալիստների ասպարեզ ակումբ» հասարակական կազմակերպության դիտորդ: Վերջինս ժամը 20:00-ին՝ ընտրության քվեարկության ավարտից հետո, ցանկացել է լուսանկարել գրանցամատյանը, սակայն տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը թույլ չի տվել այն պատճառաբանությամբ, որ չի թույլատրվում այն լուսանկարել քվեարկության ավարտից հետո: Նշված միջադեպի վերաբերյալ դիտորդը կազմել է միջադեպի արձանագրություն:

Հանձնաժողովին ներկայացվել են հետևյալ պահանջները. «Ձեռնարկել միջոցներ՝

1. վերոգրյալ խախտումները համապատասխան փաստաթղթերում արձանագրելու. արդյունավետ քննության և օրենսդրությամբ սահմանված միջոցների ձեռնարկման ուղղությամբ.

2. խախտումներ կատարած անձանց և դրանք արձանագրելու և վերացնելու պատասխանատու անձանց համար օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ.

3. ըստ անհրաժեշտության, այդ թվում՝ քրեաիրավական բնույթի խախտումները վերահասցեագրել ըստ ենթակայության.

4. քննարկել և գնահատել հիշյալ խախտումների ազդեցությունը քվեարկության արդյունքների վրա.

5. համապատասխան սուբյեկտների իրավունքների խախտումների արձանագրման և դրանք ըստ հնարավորության, վերացնելու ուղղությամբ:»:

2. Թիվ 11 տարածքային ընտրական հանձնաժողովի հիմնավորումները.

Վարչական վարույթի հարուցման մերժումը Տարածքային ընտրական հանձնաժողովի կողմից պատճառաբանվել է դիմումատու կազմակերպությունների՝ դիմումում վկայակոչվող իրավունքների պաշտպանությամբ դիմելու իրավունք ունեցող իրավասու սուբյեկտ չհանդիսանալու հանգամանքով: Մասնավորապես, տարածքային ընտրական հանձնաժողովը հղում է կատարել ՀՀ ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասին՝ արձանագրելով, որ յուրաքանչյուր կոնկրետ սուբյեկտի իրավունք է վերապահվում բողոքարկելու ընտրական հանձնաժողովի որոշումը, գործողությունը (անգործությունը), եթե նման բողոքարկումը նպատակ ունի իրականացնելու բողոքարկող սուբյեկտի խախտված իրավունքի պաշտպանությունը: Հղում է կատարվել նաև «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներին և ՀՀ ընտրական օրենսգրքի 30-րդ և 31-րդ հոդվածներին, ինչպես նաև ՀՀ ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ պարբերությանը, համաձայն որի՝ ոչ իրավասու անձի կողմից ներկայացված դիմումները չեն քննարկվում, դրանցով վարչական վարույթներ չեն հարուցվում և ընտրական հանձնաժողովները որոշում են կայացնում վարչական վարույթի հարուցումը մերժելու մասին, որոնց հիման վրա տարածքային ընտրական հանձնաժողովը որոշել է «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» և «Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» հասարակական կազմակերպությունների դիմում-բողոքով վարչական վարույթի հարուցումը մերժել:

3. Գտնում ենք, որ թիվ 11 տարածքային ընտրական հանձնաժողովի 25.06.2021 թ. թիվ 06-Ա որոշումն իրավաչափ չէ և ենթակա է անվավեր ճանաչման հետևյալ պատճառաբանությամբ.

3.1. Սուբյեկտիվ իրավունքների խախտման հիմքով դիմում-բողոքի վարչական վարույթի հարուցումը մերժելու մասով.

Թիվ 11 տարածքային ընտրական հանձնաժողովը 25.06.2021թ. թիվ 06-Ա որոշմամբ չի քննարկել դիտորդ Սիրանուշ Արտակի Փահլևանյանի՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանի լուսանկարահանման խնդրանքի մերժումը թիվ 11/27 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից: Նշվածի կապակցությամբ հարկ է նշել, որ ՀՀ ընտրական օրենսգրքի 8-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ ընտրական հանձնաժողովների նիստերը (այդ թվում՝ տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփման նիստը), ինչպես նաև քվեարկության ընթացքը վստահված անձինք, դիտորդները, այցելուները, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները կարող են լուսանկարել, տեսանկարահանել՝ չխախտելով ընտրողների քվեարկության գաղտնիության իրավունքը: Միաժամանակ, Ընտրական օրենսգրքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված է դիտորդի՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի տնօրինության տակ գտնվող ընտրական փաստաթղթերին (բացառությամբ քվեարկության ընթացքում քվեարկությանը մասնակցած ընտրողների ցուցակների), դատարանի համապատասխան վճիռներին, ընտրողին տրամադրած լիազոր մարմնի համապատասխան տեղեկանքին ծանոթանալու իրավունքը: Արձանագրված է նաև դիտորդի՝ ընտրական փաստաթղթերից (բացառությամբ քվեարկությանը մասնակցած ընտրողների ցուցակների, քվեարկության կտրոնների) քաղվածքներ և նշումներ ինքնուրույն կատարելու իրավունքը:

Գտնում ենք, որ ոչ իրավաչափ է իր կողմից հավատարմագրված դիտորդի իրավունքի խախտման հիմքով՝ դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպության դիմումի հիման վրա վարչական վարույթի հարուցման մերժումը, քանի որ ՀՀ ընտրական օրենսգրքի 30-րդ հոդվածի ուժով Հայաստանի Հանրապետության հասարակական կազմակերպություններին վերապահված է ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելության իրավունք (այն կազմակերպություններին, որոնց կանոնադրական նպատակներն ընտրությունները նշանակելու օրվան նախորդող նվազագույնը մեկ տարի ներառում են ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության հարցեր, և որոնք չեն աջակցում թեկնածուներին կամ ընտրություններին մասնակցող կուսակցություններին), որը համապատասխան կազմակերպությունն իրականացնում է իր կողմից հավատարմագրված դիտորդների միջոցով: Ցանկացած դեպքում, երբ խախտվում է դիտորդական կազմակերպության հավատարմագրած դիտորդի իրավունքը, անմիջականորեն խախտվում է նաև վերջինիս հավատարմագրած կազմակերպության դիտորդական առաքելության իրավունքը, քանի որ կազմակերպության դիտորդական առաքելության իրավունքի իրացումն ուղղակիորեն փոխկապակցված է իր կողմից հավատարմագրված դիտորդների գործունեության հետ:

Այս կապակցությամբ հարկ ենք համարում անդրադառնալ նաև ձևավորված դատական պրակտիկային: Այսպես, մի շարք օրինական ուժի մեջ մտած դատական ակտերով արդեն իսկ փաստվել է, որ « ...նկատի ունենալով, թե ինչպիսի իրավակարգավորում է նախատեսում Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրքը դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպությունների կողմից իր դիտորդների միջոցով ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելություն իրականացնելու իրավունքի իրացման համար, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 30-32-րդ հոդվածների ամբողջ իրավակարգավորմամբ սահմանված՝ նշված իրավունքի իրացման ընթացակարգը, դատարանն արձանագրում է, որ ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելության իրավունք ունեցող հասարակական կազմակերպությունների կողմից իր կողմից հավատարմագրված դիտորդների միջոցով դիտորդական առաքելություն իրականացնելիս դիտորդական կազմակերպության հավատարմագրած դիտորդի սուբյեկտիվ

իրավունքի խախտումը անմիջականորեն հանգեցնում է այդ կազմակերպության դիտորդական առաքելություն իրականացնելու իրավունքի խախտման և այդպիսի իրավունքի պաշտպանություն իրավասու է հայցելու ինչպես դիտորդը, այնպես էլ վերջինիս հավատարմագրած հասարակական կազմակերպությունը, որպիսի պայմաններում է միայն հնարավոր ապահովել դիտորդական առաքելություն իրականացնելու իրավունքի լիարժեք իրացումը հասարակական կազմակերպությունների կողմից» (ՎԴ/3991/05/15, ՎԴ/3992/05/17 և այլն):

Օրենսդրի նման տրամաբանությունն ապացուցվում է նաև վերջին ժամանակահատվածում իրականացված օրենսդրական փոփոխություններով, որոնց արդյունքում դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունները ճանաչվել են ընտրական իրավահարաբերությունների լիարժեք սուբյեկտ՝ օժտելով վերջիններին ընտրական գործընթացների ընթացքում արձանագրված մի շարք վարչական իրավախախտումների վերաբերյալ դիմել վարչական դատարան՝ համապատասխան անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու հիմքով, այդ թվում՝ ընտրական հանձնաժողովի գրանցամատյանը սահմանված կարգով չլրացնելու հիմքով (Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք, հոդված 40.6.):

3.2. Դիտորդական կազմակերպությունների՝ օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտումները վիճարկելու հարցով իրավասուբյեկտության մասով.

Տարածքային ընտրական հանձնաժողովի 25.06.2021 թ. թիվ 06-Ա որոշմամբ ներկայացված դիմում-բողոքով վարչական վարույթի հարուցումը մերժվել է դիմումատու հասարակական կազմակերպությունների՝ օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտումները վիճարկելու իրավասուբյեկտության բացակայության հիմքով, մասնավորապես, տարածքային ընտրական հանձնաժողովը վարչական վարույթի հարուցման մերժումը պատճառաբանել է դիմումատուների կարգավիճակով և դրանից բխող իրավական հետևանքներով՝ արձանագրելով, որ ընտրական հանձնաժողովների որոշումների, գործողությունների (անգործության) բողոքարկման իրավունքը յուրաքանչյուր դեպքում պայմանավորված է բողոքարկող սուբյեկտի իրավունքի պաշտպանության նպատակի առկայությամբ, քանի որ յուրաքանչյուր կոնկրետ սուբյեկտի իրավունք է վերապահվում բողոքարկելու ընտրական հանձնաժողովի որոշումը, գործողությունը (անգործությունը), եթե նման բողոքարկումը նպատակ ունի իրականացնելու բողոքարկող սուբյեկտի խախտված իրավունքի պաշտպանությունը:

Դիմումատուներին՝ տարածքային ընտրական հանձնաժողովների գործողությունների/անգործության բողոքարկման համար ոչ իրավասու սուբյեկտ ճանաչելու հիմքով (օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտումների մասով) վարույթի հարուցման մերժումը հանգեցրել է ՀՀ ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի պահանջների խախտմանը: Մասնավորապես, դիտոդի և դիտորդական կազմակերպության՝ ընդհանուր բնույթի ընտրախախտումների (օբյեկտիվ ընտրական իրավունքի) հիմքով դիմում-բողոքներ ներկայացնելու իրավունք չունենալու վերաբերյալ տարածքային ընտրական հանձնաժողովի հետևությունը չի բխում ՀՀ ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներից: Դիտորդական կազմակերպության՝ ոչ իրավասու սուբյեկտ հանդիսանալու վերաբերյալ եզրահանգումը կատարվել է ՀՀ ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասին՝ ՀՀ Սահմանադրության 48-րդ, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 25-րդ հոդվածների, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի դրույթներին հակասող և կամայական մեկնաբանություն տալու արդյունքում: Մասնավորապես, ՀՀ ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասը

սահմանում է, որ յուրաքանչյուր ոք կարող է բողոքարկել ընտրական հանձնաժողովի որոշումը, գործողությունը (անգործությունը), եթե գտնում է, որ խախտվել կամ կարող է խախտվել իր՝ ընտրական օրենսգրքով սահմանված սուբյեկտիվ ընտրական իրավունքը: Այս իրավունքն իր բովանդակային ծավալում ներառում է յուրաքանչյուր քաղաքացու՝ օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտումները վիճարկելու, ընտրական հանձնաժողովների որոշումները, գործողությունները (անգործությունը) բողոքարկելու իրավունքը: ՀՀ ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված սուբյեկտների և նրանց վերապահված իրավունքների շրջանակի վերաբերյալ տարածքային ընտրական հանձնաժողովի կողմից տրված սահմանափակ և կամայական մեկնաբանությունը ուղղակիորեն հակասության մեջ է մտնում ՀՀ Սահմանադրության 48-րդ և Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 25-րդ հոդվածի, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի դրույթների հետ, քանի որ յուրաքանչյուր անձ պետք է ունենա նաև ընտրական իրավունքի պաշտպանության արդյունավետ միջոց: Ընտրությունների ընթացքում արձանագրված ընտրախախտումները իրենց համակցության մեջ և/կամ բնույթով կարող են ուղղակի ազդեցություն ունենալ յուրաքանչյուր ընտրողի քվեի հասցեականության վրա, ինչպես նաև յուրաքանչյուր քաղաքացու ընտրելու իրավունքի իրացման վրա առհասարակ: Ընտրական իրավահարաբերությունների սուբյեկտ հանդիսացող յուրաքանչյուր անձի, այդ թվում՝ ՋԼՄ ներկայացուցչի, դիտորդի և դիտորդական կազմակերպության կողմից ներկայացված դիմում-բողոքները՝ օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտումների հիմքով ընտրական հանձնաժողովների որոշումների և գործողությունների վիճարկման վերաբերյալ ենթակա են քննության վարչական վարույթի կարգով, նույն կարգով, ինչ ՋԼՄ ներկայացուցիչների և դիտորդների սուբյեկտիվ իրավունքների խախտումների վերաբերյալ բողոքները՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասի շրջանակներում: Հակառակ մեկնաբանությունը կհանգեցնի ընտրական իրավունքի էության խախտմանը: Այսպիսով, տարածքային ընտրական հանձնաժողովի կողմից խախտվել են ՀՀ ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասի, ՀՀ Սահմանադրության 48-րդ, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 25-րդ հոդվածի դրույթները, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ և 57-րդ հոդվածների պահանջները:

3.3. Տարածքային ընտրական հանձնաժողովի 25.06.2021 թ. թիվ 06-Ա որոշման ոչ իրավաչափությունը՝ դիմումատու հասարակական կազմակերպությունների իրավասուբյեկտության չճանաչման հիմքով.

Դիմումատուներ «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» և «Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» հասարակական կազմակերպությունների մասով դիմում-բողոքի վարույթ ընդունումը մերժվել է՝ հղում կատարելով «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներին և ՀՀ ընտրական օրենսգրքի 30-րդ և 31-րդ հոդվածներին: Գտնում ենք, որ այս մասով Տարածքային ընտրական հանձնաժողովի վիճարկվող որոշումն իրավաչափ չէ հետևյալ պատճառաբանությամբ.

Դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունները հանդիսանում են ընտրական իրավահարաբերությունների լիարժեք սուբյեկտ, ինչը փաստվում է նաև վերջին ժամանակահատվածում իրականացված օրենսդրական փոփոխություններով, որոնց արդյունքում դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական

կազմակերպություններին իրավունք է վերապահվել ընտրական գործընթացների ընթացքում արձանագրված մի շարք վարչական իրավախախտումների վերաբերյալ դիմել վարչական դատարան՝ համապատասխան անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու հիմքով: Կազմակերպությունների դիտորդական առաքելությունը հանդիսանում է հանրային գործառույթ, որի նպատակն է ապահովել ընտրությունների թափանցիկությունը և նպաստել ընտրական գործընթացների պատշաճ իրականացմանը: Վերոնշյալ հանրային իրավական գործառույթի արդյունավետ իրականացումը, ի թիվս այլոց, պայմանավորված է դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների կողմից ընտրական իրավունքի խախտումների վերաբերյալ դիմում-բողոքներ ներկայացնելու իրավասուբյեկտությամբ: Ավելին, ցանկացած դեպքում, երբ խախտվում է դիտորդական կազմակերպության հավատարմագրած դիտորդի իրավունքը, անմիջականորեն խախտվում է նաև վերջինիս հավատարմագրած կազմակերպության դիտորդական առաքելության իրավունքը, քանի որ կազմակերպության դիտորդական առաքելության իրավունքի իրացումն ուղղակիորեն փոխկապակցված է իր կողմից հավատարմագրված դիտորդի գործունեության հետ:

Հարկ ենք համարում անդրադառնալ նաև հասարակական կազմակերպության իրավասուբյեկտության հարցին ՀՀ Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների շրջանակներում: Այսպես, ՀՀ Սահմանադրական դատարանի 07.09.2010թ. ՍԴՈ-906 որոշմամբ արձանագրվել է, որ քաղաքացիական հասարակությունն ինքնուրույն և պետությունից անկախ հասարակական մեխանիզմների և հարաբերությունների համակարգ է, որը պայմաններ է ապահովում կոլեկտիվների և անհատների մասնավոր շահերի և պահանջմունքների բավարարման համար: Հաշվի առնելով հասարակական կազմակերպությունների դերը պետության և քաղաքացիական հասարակության կյանքում, առաջնորդվելով վերջիններիս գործունեության արդյունավետության բարձրացման նկատառումներով՝ սահմանադրական դատարանը գտել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը շահագրգիռ (կանոնադրական համապատասխան իրավասությամբ օժտված) հասարակական կազմակերպությունների համար, որպես իրավաբանական անձ, կարող է սահմանել տվյալ ոլորտում անձանց խախտված իրավունքների համար դատարան դիմելու իրավունքի իրացման դեպքերը և կարգը՝ հաշվի առնելով actio popularis բողոքների ինստիտուտի առնչությամբ եվրոպական երկրների ներկա զարգացումների միտումները:

Շեշտվել է նաև, որ. «Ուրիշի խախտված իրավունքների համար դատարան կամ այլ մարմիններին ու պաշտոնատար անձանց դիմելու իրավունքի իրացման դեպքերը և կարգը սահմանելիս հարկ կլինի հաշվի առնել միայն այն հասարակական կազմակերպություններին, որոնց նպատակներից են կոլեկտիվ կամ համայնքային կոնկրետ շահերի պաշտպանությունը: Այս դիրքորոշումը համահունչ է նաև «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետին, որի համաձայն՝ կազմակերպությունն իր կանոնադրությամբ նախատեսված նպատակներն իրականացնելու համար իրավունք ունի օրենքով սահմանված կարգով ներկայացնել ու պաշտպանել իր և իր անդամների իրավունքները և օրինական շահերն այլ կազմակերպություններում, դատարանում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում”:

ՀՀ Սահմանադրական դատարանի 07.09.2010թ. ՍԴՈ-906 որոշմամբ արձանագրվել է նաև, որ վարչական դատավարությունում այլոց իրավունքների պաշտպանությամբ դատարան դիմելու իրավունքի („Actio popularis") առնչությամբ միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ, որպես կանոն, եվրոպական երկրներում այս ինստիտուտն իր

դասական իմաստով և լրիվ ծավալով կիրառում չունի: Միաժամանակ, սահմանադրական դատարանը նման ուսումնասիրության արդյունքներով արձանագրել է, որ մի շարք երկրներում վարչական գործերով հայց ներկայացնելու իրավասության հիմնական չափանիշ է հանդիսանում «իրավական շահագրգռվածությունը»: Վերջինս դատահիրավական պրակտիկայում ստացել է այնքան լայն մեկնաբանություն, որ հասարակական կազմակերպություններին կամ քաղաքացիական նախաձեռնությամբ հանդես եկող և օրենքով սահմանված կարգով գործունեություն իրականացնող այլ միավորումների հնարավորություն է ընձեռվում հանդես գալ որոշակի խմբի կոլեկտիվ իրավունքի պաշտպանությամբ, եթե այդ պաշտպանությունը տվյալ միավորման կոնկրետ նպատակների շրջանակում է: Այսպիսի դիրքորոշում է ըստ էության արտահայտվել նաև Հայաստանի Հանրապետության դատական պրակտիկայում: Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 30.10.2009թ. թիվ ՎԴ/3275/05/08 որոշմամբ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Սույն գործով «Էկոդար» բնապահպանական հասարակական կազմակերպությունն Օրհուսի կոնվենցիայի իմաստով «շահագրգիռ» կազմակերպություն է, հետևաբար, օգտվում է այդ կազմակերպության կանոնադրական նպատակներից բխող, շրջակա միջավայրի պահպանությանը վերաբերող հարցով դատական պաշտպանության իրավունքից»:

Հասարակական կազմակերպությունների կամ այլ միավորումների կողմից կոլեկտիվ իրավունքների և օրինական շահերի դատական պաշտպանության հարցերին է անդրադարձել նաև Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն: Ըստ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 2004 թվականի դեկտեմբերի 15-ի՝ «Վարչական ակտերի նկատմամբ դատական վերահսկողության մասին» (2004)20 հանձնարարականի՝ Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները խրախուսում են քննության առնել այն հարցը, թե արդյո՞ք դատական վերահսկողության մատչելիությունը պետք է երաշխավորվի նաև այն միավորումների կամ այլ անձանց կամ մարմինների համար, որոնք իրավասու են պաշտպանել կոլեկտիվ կամ համայնքային շահեր:

Թիվ ՎԴ/3275/05/09 գործով ՀՀ վարչական դատարանի 09.07.2009թ. որոշմամբ «Թրանսփարենսի Ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոն», «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» և «Էկոդար» բնապահպանական հասարակական կազմակերպությունների հայցադիմումի ընդունումը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ վերջիններս ակնհայտորեն չունեն հայցադիմումում ներկայացված պահանջներով դատարան դիմելու իրավունք, քանի որ այդ հասարակական կազմակերպությունների իրավունքները, վիճարկվող պահանջներով, չեն խախտվել և չեն շոշափվել: ՀՀ վարչական դատարանի 28.07.2009թ. որոշմամբ ՀՀ վարչական դատարանի 09.07.2009թ. որոշման դեմ Կազմակերպության և «Թրանսփարենսի Ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության բողոքը մերժվել է միևնույն պատճառաբանությամբ: Վճռաբեկ դատարանի 30.10.2009թ. որոշմամբ Կազմակերպության և «Թրանսփարենսի Ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության վճռաբեկ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ բեկանվել և փոփոխվել է ՀՀ վարչական դատարանի 28.07.2009թ. որոշման՝ Կազմակերպության բողոքը մերժելու մասը: Կազմակերպության բողոքը բավարարվել է: Որոշման՝ «Թրանսփարենսի Ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության բողոքը մերժելու մասը, թողնվել է օրինական ուժի մեջ: Վճռաբեկ դատարանը վերոնշյալ որոշմամբ անհիմն է համարել Դատարանի կողմից «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի կիրառման հիմքով «Էկոդար» բնապահպանական հասարակական կազմակերպության

հայցադիմումի ընդունման մերժումը: Դատարանի 24.03.2010թ. վճռով մերժվել է Կազմակերպության հայցն այն պատճառաբանությամբ, որ «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածը, Օրհուսի կոնվենցիայի 9-րդ հոդվածի 3-րդ կետը հասարակական կազմակերպություններին չի օժտում դատավարական իրավասուբյեկտությամբ:

Նույն գործով կրկին ներկայացված վճռաբեկ բողոքի հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանը 01.04.2011թ. որոշմամբ գտել է, որ վիճարկվող դատական ակտը հիմնավոր է և բխում է ՀՀ օրենսդրության կարգավորման նպատակներից, ընդ որում վկայակոչվել է ՀՀ Սահմանադրական դատարանի թիվ ՍԴՈ-906 որոշումը:

ՀՀ սահմանադրական դատարանն, իր 2012թ. տարեկան հաղորդմամբ անդրադառնալով Վճռաբեկ դատարանի որոշմանը, վերահաստատել է իր իրավական դիրքորոշումն այն մասին, որ «... հասարակական կազմակերպություններին հնարավորություն է ընձեռվում հանդես գալ որոշակի խմբի կոլեկտիվ իրավունքների պաշտպանությամբ, եթե այդ պաշտպանությունը տվյալ հասարակական կազմակերպության կոնկրետ նպատակների շրջանակներում է» և արձանագրել, որ «... ՀՀ վարչական դատարանը, նույն կերպ նաև՝ 01.04.2011թ. ՀՀ վճռաբեկ դատարանը, սխալ են մեկնաբանել ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ- 906 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումը հասարակական կազմակերպությունների դատավարական իրավասուբյեկտության վերաբերյալ՝ վերջիններիս զրկելով իրենց կանոնադրական նպատակներից բխող հարցերի առնչությամբ դատարան դիմելու իրավունքից»:»:

Ղեկավարվելով ՀՀ ընտրական օրենսգրքի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի դրույթներով՝ դիմումատուները ներկայացրել են հետևյալ պահանջները.

«1. անվավեր ճանաչել թիվ 11 տարածքային ընտրական հանձնաժողովի 25.06.2021թ. թիվ 06-Ա որոշումը:

2. Ձեռնարկել միջոցներ՝

- վերոգրյալ խախտումները արդյունավետ քննելու ուղղությամբ.

- համապատասխան սուբյեկտների իրավունքների խախտումների արձանագրման և դրանք, ըստ հնարավորության, վերացնելու ուղղությամբ.

- խախտումներ կատարած անձանց և դրանք արձանագրելու և վերացնելու համար պատասխանատու անձանց օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ:»:

Դիմումը Հանձնաժողով է ներկայացվել էլեկտրոնային հարցումների միասնական հարթակի միջոցով 26.06.2021թ. ի. 202150 դիմումով, և այն ստորագրված է դիմումատուների լիազորված ներկայացուցիչ՝ Էլինա Գյուրջյանի էլեկտրոնային ստորագրությամբ: Չնայած դիմումով նշված է, որ դիմումին կից ներկայացված է վիճարկվող 25.06.2021թ. թիվ 06-Ա որոշման պատճենը, հասարակական կազմակերպությունների կողմից տրված լիազորագրերի սկանավորված օրինակները, դիմումատուների ներկայացուցչի փաստաբանական գործունեության արտոնագիրը և գրավոր ապացույցներ, սակայն դիմումին կից ներկայացված է հասարակական կազմակերպությունների կողմից տրված լիազորագրերի պատճենները, Էլինա Գյուրջյանի նույնականացման քարտի պատճենը, փաստաբանական գործունեության արտոնագրի պատճենը:

Հանձնաժողովի էլեկտրոնային հասցեին էլեկտրոնային տարբերակով ստացվել են նաև սկանավորված փաստաթղթեր՝ հասարակական կազմակերպությունների կողմից տրված

լիազորագրերի սկանավորված օրինակները, դիմումատուների ներկայացուցչի փաստաբանական գործունեության արտոնագիրը, վիճարկվող որոշումը և «Ապացույցներ» վերնագրով թղթապանակ, որը ներառում է 6 լուսանկար:

2. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պատճառաբանությունները, հիմնավորումները և եզրահանգումը

1. Ուսումնասիրելով դիմում-բողոքը՝ կից փաստաթղթերով, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը թիվ 11 տարածքային ընտրական հանձնաժողովից պահանջել և ստացել է 25.06.2021թ. թիվ 06-Ա որոշման ընդունման համար հիմք հանդիսացած նյութերը:

Դիմումատուները 22.06.2021թ. ժամը 09:50-ին դիմում են ներկայացրել թիվ 11 տարածքային ընտրական հանձնաժողով, որով ներկայացվում էին թիվ 11/34 և 11/27 ընտրական տեղամասի տեղամասային կենտրոնների վերաբերյալ քվեարկության օրվա առնչությամբ որոշ հանգամանքներ: Որպես պահանջ նշվել էր «ձեռնարկել միջոցներ՝ 1. վերոգրյալ խախտումները համապատասխան փաստաթղթերում արձանագրելու, արդյունավետ քննության և օրենսդրությամբ սահմանված միջոցների ձեռնարկման ուղղությամբ. 2. խախտումներ կատարած անձանց և դրանք արձանագրելու և վերացնելու պատասխանատու անձանց համար օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ. 3. ըստ անհրաժեշտության, այդ թվում՝ քրեաիրավական բնույթի խախտումները վերահասցեագրել ըստ ենթակայության. 4. քննարկել և գնահատել հիշյալ խախտման (խախտումների) ազդեցությունը քվեարկության արդյունքների վրա. 5. համապատասխան սուբյեկտների իրավունքների խախտումների արձանագրման և դրանք ըստ հնարավորության, վերացնելու ուղղությամբ:»:

Վիճարկվող որոշմամբ թիվ 11 տարածքային ընտրական հանձնաժողովը, ուսումնասիրելով դիմումը՝ կից փաստաթղթերով, որոշել է վարչական վարույթի հարուցումը մերժել՝ ներկայացված դիմումով դիմումատու հասարակական կազմակերպությունների իրավասու սուբյեկտ չհանդիսանալու հիմքով:

Դիմումի ուսումնասիրությամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ դիմումով նշվում են վիճարկվող որոշման անվավերության երեք հիմքեր.

1) սուբյեկտիվ իրավունքների խախտման հիմքով դիմում-բողոքի վարչական վարույթի հարուցումը մերժելը.

2) դիտորդական կազմակերպությունների՝ օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտումները վիճարկելու իրավասուբյեկտությունը.

3) դիմումատու հասարակական կազմակերպությունների իրավասուբյեկտությունը չճանաչելը:

2. Անդրադառնալով դիմումում վկայակոչված հասարակական կազմակերպությունների իրավասուբյեկտության հարցին՝ սուբյեկտիվ իրավունքների խախտման հիմքով դիմում-բողոքի ներկայացնելու իրավասու սուբյեկտ չհանդիսանալու տեսանկյունից (դիմում-բողոքի 3.1. և 3.3. կետեր), Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գտնում է, որ անհիմն և առարկայազուրկ է դիմումատուների դատողությունն առ այն, որ «ցանկացած դեպքում, երբ խախտվում է դիտորդական կազմակերպության հավատարմագրված դիտորդի իրավունքը, անմիջականորեն խախտվում է նաև վերջինիս հավատարմագրած կազմակերպության դիտորդական առաքելության իրավունքը, քանի որ կազմակերպության դիտորդական առաքելության իրավունքի իրացումն ուղղակիորեն փոխկապակցված է իր կողմից հավատարմագրված դիտորդների գործունեության հետ»: Վերոգրյալի առնչությամբ վկայակոչվում է «մի շարք օրինական ուժի մեջ մտած դատական ակտերով» դիրքորոշումն առ այն, որ « ...նկատի ունենալով, թե ինչպիսի իրավակարգավորում է նախատեսում Հայաստանի Հանրապետության

ընտրական օրենսգիրքը դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպությունների կողմից իր դիտորդների միջոցով ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելություն իրականացնելու իրավունքի իրացման համար, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 30-32-րդ հոդվածների ամբողջ իրավակարգավորմամբ սահմանված՝ նշված իրավունքի իրացման ընթացակարգը, դատարանն արձանագրում է, որ ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելության իրավունք ունեցող հասարակական կազմակերպությունների կողմից իր կողմից հավատարմագրված դիտորդների միջոցով դիտորդական առաքելություն իրականացնելիս դիտորդական կազմակերպության հավատարմագրած դիտորդի սուբյեկտիվ իրավունքի խախտումը անմիջականորեն հանգեցնում է այդ կազմակերպության դիտորդական առաքելություն իրակա-նացնելու իրավունքի խախտման և այդպիսի իրավունքի պաշտպանություն իրավասու է հայցելու ինչպես դիտորդը, այնպես էլ վերջինիս հավատարմագրած հասարակական կազմակեր-պությունը, որպիսի պայմաններում է միայն հնարավոր ապահովել դիտորդական առաքելություն իրականացնելու իրավունքի լիարժեք իրացումը հասարակական կազմակերպությունների կողմից» (ՎԴ/3991/05/15, ՎԴ/3992/05/17 և այլն)»:

Դիմումատուների մատնանշված վարչական գործերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ ՎԴ/3991/05/15 վարչական գործով՝ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությունն ընդդեմ Վահան Գյոզալյանի՝ բռնագանձման պահանջի մասին գործով ՀՀ վարչական դատարանը նման դիրքորոշում չի արտահայտել, և նման իրավական դիրքորոշում է արտահայտված միակ վկայակոչված՝ ՎԴ/3992/05/17 վարչական գործով:

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ նաև Ընտրական օրենսգիրք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելության իրավունք ունեն՝

1) միջազգային կազմակերպությունները և օտարերկրյա այն հասարակական կազմակերպությունները, որոնց կանոնադրական նպատակները ներառում են ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության հարցեր.

2) Հայաստանի Հանրապետության այն հասարակական կազմակերպությունները, որոնց կանոնադրական նպատակներն ընտրությունները նշանակելու օրվան նախորդող նվազագույնը մեկ տարի ներառում են ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության հարցեր, և որոնք չեն աջակցում թեկնածուներին կամ ընտրություններին մասնակցող կուսակցություններին:»:

Ընտրական օրենսգրքի 31-րդ հոդվածի համաձայն՝

«1. Սույն օրենսգրքի 30-րդ հոդվածի 1-ին մասում նշված կազմակերպությունների դիտորդներն իրենց առաքելությունն իրականացնում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովում հավատարմագրվելուց հետո:

2. Հավատարմագրվելու կամ հավատարմագրված դիտորդների ցանկում փոփոխություններ (լրացումներ) կատարելու համար դիմումները Կենտրոնական ընտրական հանձնաժողով են ներկայացվում ընտրությունները նշանակելու օրվանից հետո, բայց քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 15 օր առաջ:

Մինչև հավատարմագրվելու համար դիմում ներկայացնելը Հայաստանի Հանրապետությունում գրանցված հասարակական կազմակերպությունները պարտավոր են ընդունել իրենց դիտորդների վարքագծի կանոններ, որոնք պետք է համապատասխանեն

ընտրությունների դիտարկման միջազգային սկզբունքներին և սույն օրենսգրքի կանոնակարգումներին:

Սույն մասում նշված հասարակական կազմակերպություններն իրենց դիտորդների համար կազմակերպում և անցկացնում են ընտրական օրենսդրության ու կազմակերպության դիտորդների վարքագծի կանոնների ուսուցում:

Հավատարմագրվելու դիմումը պետք է նշում պարունակի կազմակերպության դիտորդների վարքագծի կանոնների ընդունման և ուսուցման մասին:

3. Կենտրոնական ընտրական հանձնաժողովը դիտորդներին տրվող վկայականներն այդ կազմակերպություններին հանձնում է դիմումն ստանալուց հետո՝ 12 օրվա ընթացքում:

4. Կենտրոնական ընտրական հանձնաժողովը մերժում է դիտորդների հավատարմագրման մասին դիմումը, եթե կազմակերպության կանոնադրական նպատակները չեն բավարարում սույն օրենսգրքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի պահանջները, կամ դիմումը ներկայացվել է սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետների խախտմամբ, կամ ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում սույն հոդվածի 9-րդ մասով սահմանված՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշման պահանջներին, կամ դիմումը չի պարունակում նշում կազմակերպության դիտորդների վարքագծի կանոնների ընդունման կամ ուսուցման մասին:»:

Վերը նշված իրավադրույթների վերլուծությամբ արձանագրվում է.

1) Հայաստանի Հանրապետության այն հասարակական կազմակերպությունները, որոնք բավարարում են Ընտրական օրենսգրքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 31-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները, ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելություն իրականացնելու նպատակով դիտորդների հավատարմագրման համար Կենտրոնական ընտրական հանձնաժողովին դիմելու իրավունք ունեն.

2) Ընտրական օրենսգրքով հստակ թվարկված են ընտրական գործընթացներում հասարակական կազմակերությունների իրավունքները և պարտականությունները (8-րդ հոդվածի 11.1-րդ մաս, 30-րդ հոդվածի 1-ին մաս, 31-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 4-րդ մասեր, 41-րդ հոդվածի 5-րդ մաս):

Ընտրական օրենսգրքով հստակ տարանջատված են ընտրական գործընթացներում հասարակական կազմակերպությունների և այլ սուբյեկտների կարգավիճակները, և հասարակական կազմակերպություններն ընտրական գործընթացի կազմակերպման, այդ թվում՝ քվեարկության կարգի ենթադրյալ խախտումների կապակցությամբ բողոքարկման իրավունքով օժտված չեն, ինչն ամրագրված է Ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասով, որը սահմանում է.

«Ընտրական հանձնաժողովի որոշումը, գործողությունը (անգործությունը) կարող է բողոքարկել՝

1) յուրաքանչյուր ոք, ով գտնում է, որ խախտվել կամ կարող է խախտվել իր՝ սույն օրենսգրքով սահմանված սուբյեկտիվ ընտրական իրավունքը.

2) վստահված անձը, եթե գտնում է, որ խախտվել է իր կամ իր վստահորդի՝ սույն օրենսգրքով սահմանված իրավունքը.

3) դիտորդը կամ այցելուն, եթե գտնում է, որ խախտվել է իր՝ սույն օրենսգրքով սահմանված իրավունքը.

4) զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչը, եթե գտնում է, որ խախտվել է իր՝ սույն օրենսգրքով սահմանված իրավունքը.

5) ընտրություններին մասնակցող կուսակցության լիազոր ներկայացուցիչը, եթե գտնում է, որ խախտվել է իր կամ իր վստահորդ կուսակցության կամ կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուի՝ սույն օրենսգրքով սահմանված իրավունքը:»:

Ընտրական օրենսգրքի վերը նշված նորմերի վերլուծության արդյունքում Կենտրոնական ընտրական հանձաժողովը գտնում է, որ օրենսդիրը, ամրագրելով վերոհիշյալ սուբյեկտային կազմի՝ ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունները (անգործությունը) բողոքարկելու իրավունքը, միաժամանակ այդ իրավունքի իրացման հնարավորությունը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պայմանավորում է բողոքարկող սուբյեկտի իրավունքի պաշտպանության նպատակի առկայությամբ, այսինքն՝ յուրաքանչյուր կոնկրետ սուբյեկտի իրավունք է վերապահում բողոքարկելու ընտրական հանձնաժողովի որոշումը, գործողությունը (անգործությունը), եթե նման բողոքարկումը նպատակ ունի իրականացնելու բողոքարկող սուբյեկտի խախտված իրավունքի պաշտպանությունը: Ընտրական գործընթացում միայն վստահված անձի և ընտրություններին մասնակցող կուսակցության լիազոր ներկայացուցչի պարագայում է, որ օրենսդիրը նրանց բողոքարկման իրավունք է վերապահել նաև այն դեպքում, երբ բողոքարկվող որոշմամբ, գործողությամբ (անգործությամբ) խախտվել են իրենց վստահորդի իրավունքները:

Բողոքարկումը կրում է հասցեավորված բնույթ: Այսինքն՝ անձը ցանկացած կամ վերացական պահանջներով իրավական պաշտպանության դիմել չի կարող, այլ նա կարող է դիմել իրավունքների պաշտպանության, երբ հանդիսանում է շահագրգիռ անձ, այսինքն՝ վարչական մարմնի կողմից խախտվել են անձի հանրային սուբյեկտիվ իրավունքները: Բողոքարկման ինստիտուտը ծառայում է մարդու և քաղաքացու իրավունքների, անձնական շահերի պաշտպանությանը: Դա նշանակում է, որ իրավունքների պաշտպանություն կարող է հայցել միայն այն անձը, ով գտնում է, որ վարչարարությամբ իր իրավունքները կամ շահերն անմիջականորեն շոշափվել են: Անձինք չեն կարող հայցել անձամբ իրենց չվերաբերող որևէ վարչարարության ստուգում միայն այն պատճառով, որ նրանք ընդհանրապես շահագրգռված են վարչական մարմինների իրավաչափ գործունեության մեջ: Հայաստանի Հանրապետության օրենսդրությունն ամրագրելով այս մոտեցումը, չի ճանաչում (որոշակի՝ սույն դիմումին չվերաբերող, բացառություններով հանդերձ), այսպես կոչված, հանրային գանգատը:

«Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրյա պետությունների քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց (այսուհետ՝ ֆիզիկական անձ) և (կամ) իրավաբանական անձանց հասարակական միավորում է, որն ունի ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակ:»:

Հասարակական կազմակերպությունների՝ Ընտրական օրենսգրքով նախատեսված իրավունքներն ամրագրված են նույն օրենսգրքի 30-րդ և 31-րդ հոդվածներով և վերաբերում են դիտորդական առաքելություն իրականացնելու նպատակով հավատարմագրվելուն: Հետևաբար, հասարակական կազմակերպությունները կարող են Ընտրական օրենսգրքի 30-րդ և 31-րդ հոդվածներով սահմանված իրենց իրավունքների պաշտպանության նպատակով բողոքարկել իրենց հավատարմագրմանն առնչվող՝ հավատարմագրումն իրականացնող ընտրական հանձնաժողովի ակտերը:

Դիմումով, որպես դիմումատու հանդես են գալիս միայն «Թրանսփարենսի Ինթերնեշնլ Հակակոռուպցիոն Կենտրոն» և «Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» հասարակական կազմակերպությունները, որոնք հանդիսանում են իրավաբանական անձինք՝ իրավունքի ինքնուրույն սուբյեկտներ:

Ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասի իրավադրույթների վերլուծությամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ ընտրական հանձնաժողովի որոշումը, գործողությունը (անգործությունը) բողոքարկելու իրավունքով օժտված սուբյեկտների ցանկից ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպությունները բացակայում են:

Վերոգրյալի հաշվառմամբ, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը արձանագրում է, որ թիվ 11 տարածքային ընտրական հանձնաժողովին հասցեագրված դիմումի քննության շրջանակներում պետք է կիրառվեին Ընտրական օրենսգրքի կանոնակարգումները, ինչն արվել է:

Ընտրական իրավահարաբերություններում հասարակական կազմակերպությունների իրավասուբյեկտության հարցին բազմիցս անդրադարձել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը (02.05.2017թ. N 185–Ա, 186-Ա, 187-Ա, 04.05.2017թ. N 203-Ա, 204-Ա, 205-Ա, 206-Ա, 207-Ա, 216-Ա, 217-Ա, 06.05.2017թ. N 218-Ա, 219-Ա, 220-Ա, 228-Ա, 229-Ա, 236-Ա, 369-Ա, 240-Ա, 256-Ա, 17.10.2018թ. N 81-Ա, 82-Ա, 83-Ա, 84-Ա, 85-Ա, 86-Ա, 16.01.2019թ. N 4-Ա, 5-Ա, 6-Ա, 7-Ա, 8-Ա, 10-Ա, 12-Ա, 15-Ա և այլ որոշումներ), ինչպես նաև Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը և Հայաստանի Հանրապետության վերաքննիչ վարչական դատարանը: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերը նշված եզրահանգումը համահունչ է Հայաստանի Հանրապետության դատական պրակտիկայում քննության առարկա հարցի առնչությամբ առկա հետևյալ դիրքորոշումների հետ: Այսպես,

- ՎԴ/4154/05/17 վարչական գործով կայացված ՀՀ վարչական դատարանի վճռում նշված է. «*Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի 07.09.2010 թվականի թիվ ՍԴՈ-906 որոշմամբ արտահայտած վերոնշյալ իրավական դիրքորոշման լույսի ներքո՝ անդրադառնալով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի վերոնշյալ նորմերով սահմանված իրավակարգավորումներին՝ Դատարանը փաստում է, որ օրենսդիրը դիտորդական առաքելությամբ հանդես գալու հնարավորություն է տվել Հայաստանի Հանրապետության այն հասարակական կազմակերպություններին, որոնց կանոնադրական նպատակներն ընտրությունները նշանակելու օրվան նախորդող նվազագույնը մեկ տարի ժամանակահատվածում ներառել են ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության հարցերը, և որոնք չեն աջակցում թեկնածուներին կամ ընտրություններին մասնակցող կուսակցություններին՝ միաժամանակ վերջիններին իրենց իրավունքների պաշտպանության նպատակով իրավունք վերապահելով բողոքարկել բացառապես իրենց հավատարմագրմանն առնչվող՝ հավատարմագրումն իրականացնող ընտրական հանձնաժողովի ակտերը (գործողությունը և/կամ անգործությունը), իսկ հասարակական կազմակերպությունների դիտորդական առաքելության առնչությամբ հավատարմագրմանը չառնչվող և Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով նախատեսված դեպքերում ընտրական հանձնաժողովների որոշումները, գործողությունները (անգործությունը) վարչական կամ դատական կարգով բողոքարկելու իրավունքը վերապահել է կոնկրետ այն դիտորդներին, ովքեր կգտնեն, որ խախտվել են իրենց՝ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված իրավունքները (Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք, հոդված 48, մաս առաջին, կետ 3-րդ): Այսինքն՝ օրենսդիրը որոշակի պահանջների բավարարող հասարակական կազմակերպություններին դիտորդական առաքելությամբ հանդես գալու հնարավորություն տալով՝ միաժամանակ եզրագծել է նրանց և դիտորդների՝ իրենց իրավունքների պաշտպանության նպատակով ընտրական հանձնաժողովների որոշումները, գործողությունները (անգործությունը) վարչական կամ դատական կարգով բողոքարկելու իրավունքների շրջանակները՝ դիտորդական*

առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպություններին վերապահելով բացառապես իրենց հավատարմագրմանն առնչվող՝ հավատարմագրումն իրականացնող ընտրական հանձնաժողովի ակտերը (գործողությունը և/կամ անգործությունը) բողոքարկելու իրավունք:»,

- ՎԴ/3309/05/17 վարչական գործով «Հայցադիմումը մասով վերադարձնելու, բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու միջնորդությունը մերժելու և հայցադիմումի ընդունումը մասով մերժելու մասին» 16.04.2017թ. որոշմամբ նշված է. «*Հայցադիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունից ակնհայտ է, որ թիվ 11 տարածքային ընտրական հանձնաժողովի գործողությունները և/կամ անգործությունը ուղղված են եղել բացառապես դիտորդ Արշակ Մկրտչյանին, հետևաբար թիվ 11 տարածքային ընտրական հանձնաժողովի գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու պահանջ կարող է ներկայացնել միայն Արշակ Մկրտչյանը, քանի որ թիվ 11 տարածքային ընտրական հանձնաժողովի գործողություններով և/կամ անգործությամբ անմիջականորեն կարող էին խախտվել հենց վերջինիս իրավունքները:*

Դա նշանակում է, որ Կազմակերպությունը թիվ 11 ընտրական հանձնաժողովի գործողությունները կամ անգործությունը, որոնք ուղղված են դիտորդ Արշակ Մկրտչյանին, ոչ իրավաչափ ճանաչելու պահանջ ներկայացնելու իրավունք ակնհայտորեն չունի, քանի որ այդ գործողություններով կամ անգործությամբ Կազմակերպության՝ ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով կամ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքների և ազատությունների խախտման մասին խոսք լինել չի կարող ...»,

- ՎԴ/4067/05/17, ՎԴ/4071/05/17, ՎԴ/4086/05/17 վարչական գործերով կայացված ՀՀ վարչական դատարանի վճիռներով նշված է. «*օրենսդիրը որոշակի պահանջների բավարարող հասարակական կազմակերպություններին դիտորդական առաքելությամբ հանդես գալու հնարավորություն տալով՝ միաժամանակ եզրագծել է նրանց և դիտորդների՝ իրենց իրավունքների պաշտպանության նպատակով ընտրական հանձնաժողովների որոշումները, գործողությունները (անգործությունը) վարչական կամ դատական կարգով բողոքարկելու իրավունքների շրջանակները՝ դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպություններին վերապահելով բացառապես իրենց հավատարմագրմանն առնչվող՝ հավատարմագրումն իրականացնող ընտրական հանձնաժողովի ակտերը (գործողությունը և/կամ անգործությունը) բողոքարկելու իրավունք:*»,

- ՎԴ/3994/05/17 վարչական գործով 04.06.2018թ. կայացված ՀՀ վարչական դատարանի վճռում նշված է. «*Այսպես՝ ՀՀ ընտրական օրենսգրքի ուժով ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպությունների իրավունքները սահմանափակված են իրենց դիտորդների՝ Կենտրոնական հանձնաժողովում հավատարմագրմամբ, որից հետո արդեն դիտորդները ձեռք են բերում ինքնուրույն իրավական կարգավիճակ (կամ իրավասուբյեկտություն):*

Ուստի հասարակական կազմակերպությունն ընտրական հանձնաժողովի որոշումը, գործողությունը (անգործությունը) կարող է բողոքարկել միայն ՀՀ ընտրական օրենսգրքով անմիջականորեն հենց իրեն վերաբերող իրավունքների (դիտորդի հավատարմագրման) մասով, որոնց ծավալում չի կարող ներառվել նույն օրենսգրքով սահմանված որևէ այլ սուբյեկտին, այդ թվում՝ դիտորդին, վերապահված իրավունքը:»,

- - ՎԴ/4072/05/17 վարչական գործով 04.06.2018թ. կայացված ՀՀ վարչական դատարանի վճռում նշված է. «*Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրյա պետությունների քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող*

անձանց (այսուհետ՝ ֆիզիկական անձ) և (կամ) իրավաբանական անձանց հասարակական միավորում է, որն ունի ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակ:

Վերոգրյալ նորմով սահմանված իրավակարգավորումների հաշվառմամբ և հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 4-րդ և 5-րդ գլուխներով սահմանված իրավակարգավորումների՝ դատարանը փաստում է, որ քաղաքացիները և իրավաբանական անձինք հանդիսանում են իրավունքի ինքնուրույն սուբյեկտներ և չեն կարող նույնականացվել մեկը մյուսի հետ:

Այսինքն՝ նշվածով ներքվում է Հայցվորների ներկայացուցչի փաստարկն առ այն, որ եթե խախտվում է դիմորդի իրավունքը, ապա իրեն հավատարմագրած հասարակական կազմակերպության իրավունքը ևս խախտվում է:

(...) Օրենսդիրը որոշակի պահանջների բավարարող հասարակական կազմակերպություններին դիմորդական առաքելությամբ հանդես գալու հնարավորություն տալով՝ միաժամանակ եզրագծել է նրանց և դիմորդների՝ իրենց իրավունքների պաշտպանության նպատակով ընտրական հանձնաժողովների որոշումները, գործողությունները (անգործությունը) վարչական կամ դատական կարգով բողոքարկելու իրավունքների շրջանակները՝ դիմորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպություններին վերապահելով բացառապես իրենց հավատարմագրմանն առնչվող՝ հավատարմագրումն իրականացնող ընտրական հանձնաժողովի ակտերը (գործողությունը և/կամ անգործությունը) բողոքարկելու իրավունք:»,

- ՎԴ/3989/05/17 վարչական գործով 04.06.2018թ. կայացված ՀՀ վարչական դատարանի վճռում նշված է. « (...) *ՀՀ ընտրական օրենսգիրքը Հայցվորների դիմումներում նշված օբյեկտիվ ընտրական իրավունքների խախտմամբ պայմանավորված պահանջ ներկայացնելու իրավունք չի սահմանում: Ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունները (անգործությունը) բողոքարկելու իրավունքի սուբյեկտային կազմը սահմանելով՝ այդ իրավունքի իրացման հնարավորությունը պայմանավորել է բողոքարկող սուբյեկտի իրավունքի պաշտպանության նպատակի առկայությամբ, այսինքն՝ տվյալ դեպքում, ընտրական հանձնաժողովի որոշումների բողոքարկումը նպատակ ունի իրականացնելու յուրաքանչյուր կոնկրետ սուբյեկտի՝ իր կարգավիճակով պայմանավորված, խախտված իրավունքի պաշտպանությունը:*»,

- ՎԴ/4083/05/17 վարչական գործով 17.10.2018թ. կայացված ՀՀ վարչական դատարանի վճռում նշված է.

«Ընտրական հանձնաժողովի որոշումը, գործողությունը (անգործությունը) կարող են բողոքարկել միայն <<Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք>> սահմանադրական օրենքով սպառիչ սահմանված սուբյեկտները, եթե նրանք գտնում են, որ խախտվել են իրենց՝ նույն օրենսգրքով սահմանված իրավունքները: Այսինքն՝ ընտրական հանձնաժողովի որոշումը, գործողությունը (անգործությունը) բողոքարկելու իրավունքը վերապահված է միայն <<Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք>> սահմանադրական օրենքով համապատասխան իրավունքներ ունեցող սուբյեկտներին ու միմիայն իրենց՝ նույն օրենսգրքով սահմանված իրավունքների պաշտպանության համար:

Հետևաբար որևէ սուբյեկտ իրավասու չէ <<Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք>> սահմանադրական օրենքով անմիջականորեն իրեն չվերաբերող իրավունքների պաշտպանության նպատակով բողոքարկել ընտրական հանձնաժողովի որոշումը կամ գործողությունը (անգործությունը), քանի որ նման դեպքում վերջինիս դիմումը (բողոքը) օրենքի ուժով կհամարվի որպես ոչ իրավասու անձի կողմից ներկայացված և ենթակա չի լինի քննարկման, դրանով վարչական վարույթ չի հարուցվի ու ընտրական հանձնաժողովի որոշմամբ վարույթի հարուցումը կմերժվի, ինչն իրավաչափ է և բխում է օրենքի կանոնակարգումներից:

Այսպես՝ <<Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք>> սահմանադրական օրենքի ուժով ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպությունների իրավունքները սահմանափակված են իրենց դիտորդների՝ Կենտրոնական հանձնաժողովում հավատարմագրմամբ, որից հետո արդեն դիտորդները ձեռք են բերում ինքնուրույն իրավական կարգավիճակ (կամ իրավասուբյեկտություն):

Ուստի հասարակական կազմակերպությունն ընտրական հանձնաժողովի որոշումը, գործողությունը (անգործությունը) կարող է բողոքարկել միայն <<Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք>> սահմանադրական օրենքով անմիջականորեն հենց իրեն վերաբերող իրավունքների (դիտորդի հավատարմագրման) մասով, որոնց ծավալում չի կարող ներառվել նույն օրենսգրքով սահմանված որևէ այլ սուբյեկտին, այդ թվում՝ դիտորդին, վերապահված իրավունքը:»,

- ՎԴ/3977/05/17 վարչական գործով 02.10.2020թ. կայացված Վերաքննիչ վարչական դատարանի որոշմամբ նշված է.

«ՀՀ ընտրական օրենսգրքով ամրագրված պահանջներին բավարարող ՀՀ հասարակական կազմակերպություններին օրենսդիրն օժտել է դիտորդական առաքելություն իրականացնելու իրավունքով՝ դրա պատշաճ իրացման նպատակով սահմանելով համապատասխան եղանակներ ու միջոցներ: Մասնավորապես, իրենց նշված իրավունքն իրականացնելու համար հասարակական կազմակերպությունները պետք է նախ իրենց դիտորդների համար կազմակերպեն և անցկացնեն ընտրական օրենսդրության և վերջիններիս վարքագծի կանոնների ուսուցում, ինչպես նաև վերջիններիս հավատարմագրելու համար համապատասխան դիմում ներկայացնեն Կենտրոնական ընտրական հանձնաժողով, որի կողմից հավատարմագրվելուց հետո դիտորդներն իրավունք են ստանում իրականացնելու իրենց առաքելությունը: Միաժամանակ, օրենսդիրն ամրագրել է նաև դիտորդների իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև գործունեության երաշխիքները, որոնց շրջանակներում գործելով էլ՝ դիտորդները պետք է իրականացնեն իրենց առաքելությունը: (…)

Կենտրոնական և տարածքային ընտրական հանձնաժողովում վարչական վարույթի, դրա հարուցման կամ հարուցումը մերժելու հետ կապված ՀՀ ընտրական օրենսգրքով ամրագրված իրավունքների իրացման, ինչպես նաև այդ իրավունքների պաշտպանության նպատակով համապատասխան իրավասու անձանց կողմից դիմում (բողոք) ներկայացնելու առումով, օրենսդիրը սահմանել է վարչական վարույթի հարուցումը մերժելու հիմք այն դեպքերում, երբ դիմումը ներկայացվել է ոչ իրավասու անձի կողմից: Այսինքն՝ կենտրոնական և տարածքային ընտրական հանձնաժողովում վարչական վարույթի հարուցումը մերժելը, ի թիվս այլնի, պայմանավորել է համապատասխան դիմումը ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված կոնկրետ իրավունքի պաշտպանության նպատակով ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունները (անգործությունը) բողոքարկելու իրավունքի ուղղակի կրող չհանդիսացող անձի կողմից ներկայացվելու հանգամանքով: (…)

… Հասարակական կազմակերպության կողմից ներկայացված դիմումի հիման վրա հավատարմագրվելով Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից, այնուհետև իրականացնելով իրենց առաքելությունը և այդ նպատակով օգտվելով ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված իրենց իրավունքներից ու կրելով որոշակի պարտականություններ, դիտորդներն ուղղակիորեն իրացնում են հասարակական կազմակերպության՝ դիտորդական առաքելություն իրականացնելու իրավունքը: Այսինքն՝ դիտորդական առաքելության իր իրավունքը, դիտորդներին հավատարմագրելուց հետո՝ արդեն բուն ընտրական գործընթացի

շրջանակներում հասարակական կազմակերպությունն իրացնում է կամ կյանքի է կոչում միջնորդավորված կերպով՝ ի դեմս դիտորդների, և անմիջականորեն ընտրությունների ընթացքում դիտորդական առաքելության իրականացմանն ուղղված միջոցառումներն ու գործառույթները հասարակական կազմակերպության կողմից իրագործվում են հենց դիտորդների միջոցով:

Հետևաբար, դիտորդական առաքելության իրականացմանն ուղղված միջոցառումներն ու գործառույթներն իրագործելու շրջանակներում, ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունները (անգործությունը) բողոքարկելու միջոցով իրականացնելով ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված իրենց իրավունքների պաշտպանությունը, հասարակական կազմակերպության հավատարմագրած դիտորդները, հանդիսանալով նշված՝ բողոքարկման իրավունքի ուղղակի կրող, փաստացի իրացնում են նաև հենց դիտորդական առաքելություն իրականացնելու իրավունքի պաշտպանությունը:»,

- ՎԴ/4065/05/17 վարչական գործով 20.11.2020թ. կայացված Վերաքննիչ վարչական դատարանի որոշմամբ նշված է.

«*ՀՀ ընտրական օրենսգրքով ամրագրված պահանջներին բավարարող Հայաստանի Հանրապետության հասարակական կազմակերպություններին օրենսդիրն օժտել է դիտորդական առաքելություն իրականացնելու իրավունքով՝ դրա պատշաճ իրացման նպատակով սահմանելով համապատասխան եղանակներ ու միջոցներ: Մասնավորապես, իրենց նշված իրավունքն իրականացնելու համար հասարակական կազմակերպությունները, մասնավորապես պետք է նախ իրենց դիտորդների համար կազմակերպեն և անցկացնեն ընտրական օրենսդրության և վերջիններիս վարքագծի կանոնների ուսուցում, ինչպես նաև վերջիններիս հավատարմագրելու համար համապատասխան դիմում ներկայացնեն Կենտրոնական ընտրական հանձնաժողով, որի կողմից հավատարմագրվելուց հետո արդեն դիտորդներն իրավունք են սպանում իրականացնելու իրենց առաքելությունը: (…)*

Վերաքննիչ դատարանն արձանագրում է նաև, որ կենտրոնական և տարածքային ընտրական հանձնաժողովում վարչական վարույթի, դրա հարուցման կամ հարուցումը մերժելու հետ կապված, մասնավորապես ՀՀ ընտրական օրենսգրքով ամրագրված իրավունքների իրացման, ինչպես նաև այդ իրավունքների պաշտպանության նպատակով համապատասխան իրավասու անձանց կողմից դիմում (բողոք) ներկայացնելու առումով, օրենսդիրը սահմանել է վարչական վարույթի հարուցումը մերժելու հիմք այն դեպքերում, երբ դիմումը ներկայացվել է ոչ իրավասու անձի կողմից, այսինքն՝ Վերաքննիչ դատարանի համոզմամբ, օրենսդիրը կենտրոնական և տարածքային ընտրական հանձնաժողովում վարչական վարույթի հարուցումը մերժելը, ի թիվս այլնի, պայմանավորել է, մասնավորապես համապատասխան դիմումը ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված կոնկրետ իրավունքի պաշտպանության նպատակով ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունները (անգործությունը) բողոքարկելու իրավունք չունեցող, այսինքն՝ այդ իրավունքի ուղղակի կրող չհանդիսացող անձի կողմից ներկայացվելու հանգամանքով:

… Վերաքննիչ դատարանը նախ արձանագրում է, որ օրենսդիրը հստակ ամրագրել է Հայաստանի Հանրապետության՝ ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված պահանջներին բավարարող հասարակական կազմակերպությունների դիտորդական առաքելություն իրա-կանացնելու իրավունքը, որպիսի իրավունքի իրացման նպատակով օրենսդիրը միաժամանակ նախատեսել է որոշակի մեխանիզմներ ու գործիքակազմ, որոնք վերաբերում են մասնավորապես՝ հասարակական կազմակերպության կողմից իր դիտորդների համար ընտրական օրենսդրության և վերջիններիս վարքագծի կանոնների ուսուցման կազմակերպմանն

ու անցկացմանը, ինչպես նաև դիտորդներին հավատարմագրելու համար համապատասխան դիմում ներկայացնելուն: Նշված գործընթացներն ավարտվելուց, այսինքն՝ որպես վերջնական արդյունք, դիտորդներին հավատարմագրելուց հետո, բուն ընտրական գործընթացի մեջ արդեն ընդգրկվում են հենց դիտորդները (…):

Փաստորեն, հասարակական կազմակերպության կողմից ներկայացված դիմումի հիման վրա հավատարմագրվելով Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից, այնուհետև իրականացնելով իրենց առաքելությունը և այդ նպատակով օգտվելով ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված իրենց իրավունքներից ու կրելով որոշակի պարտականություններ, դիտորդներն ուղղակիորեն իրացնում են հասարակական կազմակերպության՝ դիտորդական առաքելություն իրականացնելու իրավունքը: Այսինքն՝ դիտորդական առաքելության իր իրավունքը, դիտորդներին հավատարմագրելուց հետո՝ արդեն բուն ընտրական գործընթացի շրջանակներում հասարակական կազմակերպությունն իրացնում է կամ կյանքի է կոչում միջնորդավորված կերպով՝ ի դեմս դիտորդների, և անմիջականորեն ընտրությունների ընթացքում դիտորդական առաքելության իրականացմանն ուղղված միջոցառումներն ու գործառույթները հասարակական կազմակերպության կողմից իրագործվում են հենց դիտորդների միջոցով:»:

Ներկայացված ցանկը սպառիչ չէ:

Դիմումի ուսումնասիրությամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ թիվ 11 տարածքային ընտրական հանձնաժողով ներկայացված դիմումում դիմումատու հասարակական կազմակերպությունների որևէ իրավունք չի շոշափվում, բարձրաձայնվում են բացառապես թվով երկու ընտրական տեղամասերի տեղամասային կենտրոնների վերաբերյալ քվեարկության օրվա առնչությամբ որոշ հանգամանքներ: Ուստի փաստվում է, որ թիվ 11 տարածքային ընտրական հանձնաժողովին հասցեագրված դիմում-բողոքով բարձրացվում են բացառապես օբյեկտիվ իրավունքի խախտումների վիճարկման հարցեր:

3. Դիմումատուները ոչ իրավաչափ են համարում վիճարկվող որոշումը՝ դիմումում ներկայացնելով ընդհանուր բնույթի դատողություններ՝ օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտումները վիճարկելու իրավասուբյեկտության վերաբերյալ: Դիմումատուները, մասնավորապես, նշում են, որ «դիտորդի և դիտորդական կազմակերպության՝ ընդհանուր բնույթի ընտրախախտումների (օբյեկտիվ ընտրական իրավունքի) հիմքով դիմում-բողոքներ ներկայացնելու իրավունք չունենալու վերաբերյալ տարածքային ընտրական հանձնաժողովի հետևությունը չի բխում ՀՀ ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներից: Դիտորդի և դիտորդական կազմակերպության՝ ոչ իրավասու սուբյեկտ հանդիսանալու վերաբերյալ եզրահանգումը կատարվել է ՀՀ ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասին՝ ՀՀ Սահմանադրության 48-րդ, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 25-րդ հոդվածների դրույթներին հակասող և կամայական մեկնաբանություն տալու արդյունքում:»: Նաև նշվում է. «Ընտրությունների ընթացքում արձանագրված ընտրախախտումները իրենց համակցության մեջ և/կամ բնույթով կարող են ուղղակի ազդեցություն ունենալ յուրաքանչյուր ընտրողի քվեի հասցեականության վրա, ինչպես նաև յուրաքանչյուր քաղաքացու ընտրելու իրավունքի իրացման վրա առհասարակ: Ընտրական իրավահարաբերությունների սուբյեկտ հանդիսացող յուրաքանչյուր անձի, այդ թվում՝ ՀԼՄ ներկայացուցչի, դիտորդի և դիտորդական կազմակերպության կողմից ներկայացված դիմում-բողոքները՝ օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտումների հիմքով ընտրական հանձնաժողովների որոշումների և գործողությունների վիճարկման վերաբերյալ ենթակա են քննության վարչական վարույթի կարգով, նույն կարգով, ինչ ՀԼՄ ներկայացուցիչների և

դիտորդների սուբյեկտիվ իրավունքների խախտումների վերաբերյալ բողոքները՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասի շրջանակներում: Հակառակ մեկնաբանությունը կհանգեցնի ընտրական իրավունքի էության խախտմանը: Այսպիսով, տարածքային ընտրական հանձնաժողովի կողմից խախտվել են ՀՀ ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասի, ՀՀ Սահմանադրության 48-րդ, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 25-րդ հոդվածի դրույթները, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ և 57-րդ հոդվածների պահանջները:»:

Վերը նշված դատողությունների համար որպես իրավական հիմք դիմումատուները վկայակոչում են Ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասը, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 48-րդ հոդվածը, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 25-րդ հոդվածի դրույթները, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ և 57-րդ հոդվածների պահանջները:

Այսպես, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 48-րդ հոդվածի համաձայն.

«1. Ազգային ժողովի ընտրության կամ հանրաքվեի օրը տասնութ տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիներն ունեն ընտրելու և հանրաքվեին մասնակցելու իրավունք:

2. Ազգային ժողովի պատգամավոր կարող է ընտրվել քսանհինգ տարին լրացած, վերջին չորս տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, ընտրական իրավունք ունեցող և հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք:

3. Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրելու և ընտրվելու, տեղական հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեն ընտրության կամ հանրաքվեի օրը տասնութ տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները: Օրենքով կարող է սահմանվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձանց՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին և տեղական հանրաքվեներին մասնակցելու իրավունքը:

4. Ընտրելու և ընտրվելու, ինչպես նաև հանրաքվեին մասնակցելու իրավունք չունեն դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև դիտավորությամբ կատարված ծանր հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք: Ընտրվելու իրավունք չունեն նաև այլ հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք:»:

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 25-րդ հոդվածի համաձայն՝

«Յուրաքանչյուր քաղաքացի, առանց 2-րդ հոդվածում հիշատակվող որևէ խտրականության և առանց անհիմն սահմանափակումների, պետք է իրավունք և հնարավորություն ունենա.

ա) մասնակցելու պետական գործերը վարելուն՝ ինչպես անմիջականորեն, այնպես էլ ազատորեն ընտրված ներկայացուցիչների միջոցով.

բ) քվեարկել և ընտրվել իսկական պարբերական ընտրություններում, որոնք անց են կացվում համընդհանուր և հավասար ընտրական իրավունքի հիման վրա, գաղտնի քվեարկությամբ, և ապահովում են ընտրողների կամքի ազատ արտահայտումը.

գ) իր երկրում հավասարության ընդհանուր պայմաններով մտնել պետական ծառայություն:»:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝

«Վարչական մարմինները պարտավոր են հետևել օրենքների պահպանմանը:

2. Վարչական մարմինների լիազորությունները սահմանվում են օրենքով կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ իրավական այլ ակտերով:»:

Նույն օրենքի 57-րդ հոդվածի համաձայն՝

«1. Գրավոր կամ գրավոր հաստատված վարչական ակտը պետք է պարունակի հիմնավորում, որում պետք է նշվեն համապատասխան որոշում ընդունելու բոլոր էական փաստական և իրավական հիմքերը:

Վարչական մարմնի հայեցողական լիազորությունների իրականացման արդյունքում ընդունված վարչական ակտի հիմնավորումից պետք է պարզ լինեն այն նկատառումները, որոնց հիման վրա վարչական մարմինն ընտրել է տվյալ լուծումը:

2. Հիմնավորում չի պահանջվում, եթե՝

ա) վարչական մարմինը բավարարում է որևէ դիմում, և վարչական ակտը չի շոշափում երրորդ անձանց իրավունքները.

բ) ակտի հասցեատիրոջը կամ այն անձին, ում շահերը վարչական ակտը շոշափում է, արդեն հայտնի է վարչական մարմնի դիրքորոշումը փաստական կամ իրավական հետևանք-ների վերաբերյալ, կամ այդ դիրքորոշումն ակնհայտորեն բխում է ակտի տեքստից.

գ) վարչական մարմինը նույնանման վարչական ակտեր է հրապարակում մեծ քանա-կությամբ կամ վարչական ակտերը հրատարակում է տեխնիկական միջոցների օգտագործմամբ, և յուրաքանչյուր առանձին դեպքում հիմնավորելու անհրաժեշտություն չկա:

3. Արգելվում է վարչական մարմնի ընդունած վարչական ակտերի հիմնավորումն այն փաստարկներով, որոնք չեն առնչվում տվյալ մարմնի իրավասությանը:»:

Ընտրական գործընթացում քաղաքացու դրությունը դրսևորվում է «ընտրողի իրավական կարգավիճակում»: Ընտրողի իրավական կարգավիճակի բովանդակությունը բխում է նրա իրա-վունքից՝ ընտրելու համապատասխան ընտրությունների ժամանակ, որոշվում է ընտրական օրենսդրությամբ սահմանված որոշակի գործողություններ կատարելու իրավունքներով, որոնք կապված են նախընտրական քարոզչությանը, քվեարկությանը մասնակցելու հետ և այլն: Ընտ-րողի իրավունքները կարող են ընդարձակվել կոնկրետ դեպքում վերջինիս կողմից ընտրական գործընթացում կոնկրետ գործառույթ կատարելիս՝ որպես թեկնածու, վստահված անձ, հանձնաժողովի անդամ, դիտորդ և այլն, որոնք սահմանված են Ընտրական օրենսգրքով:

Յուրաքանչյուր ոք ընտրական իրավահարաբերություններում, ելնելով օրենսդրությամբ սահմանված հստակ չափորոշիչներից և պահանջներից, հանդես է գալիս հստակ սահմանված որևէ կարգավիճակով (ընտրող, թեկնածու, դիտորդ և այլն), ընդ որում, նշված կարգավիճակով հանդես եկող անձն օժտված է հստակ սահմանված իրավունքներով և պարտականություններով: Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և միջազգային իրավունքի նորմերով երաշխավորված ընտրելու իրավունքի իրացման, այդ թվում՝ նաև պաշտպանության, հստակ կառուցակարգերը սահմանված են «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով:

Քննարկվող դիմում-բողոքով դիմումատուները ներկայանում են որպես հասարակական կազմակերպություն և ոչ թե որպես անձ, ում Ընտրական օրենսգրքով սահմանված սուբյեկտիվ ընտրական իրավունքը խախտվել է:

Ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածում ներդրված վերոհիշյալ տրամաբանությունն ար-տահայտված է նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին»

Հայաստանի Հանրապետության օրենքի 69-րդ հոդվածում, որը ՀՀ ընտրական օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ կիրառելի է ընտրական հանձնաժողովում վարչական վարույթի նկատմամբ՝ Ընտրական օրենսգրքով սահմանված առանձնահատկություն-ների հաշվառմամբ: Համաձայն նշված օրենքի 69-րդ հոդվածի՝ անձինք իրենց իրավունքները պաշտպանելու նպատակով իրավունք ունեն բողոքարկելու վարչական ակտերը, այդ թվում՝ զուգորդվող վարչական ակտերի միջամտող դրույթները, ինչպես նաև վարչական մարմնի գործողությունը կամ անգործությունը: Նշված դրույթի բովանդակությունից բխում է, որ վարչական կարգով բողոք ներկայացնելու իրավունքը վերապահվում է այն անձանց, ովքեր բողոքարկման միջոցով պաշտպանում են ***իրենց*** խախտված իրավունքները:

Օբյեկտիվ ընտրական իրավունքի պաշտպանության իրավասուբյեկտության հարցին բազմիցս անդրադարձել է նաև վարչական դատարանը:

Այսպես, ՎԴ/4097/05/17 վարչական գործով 18.04.2018թ. կայացված վարչական դատարանի վճռում նշված է. «*Դատարանն արձանագրում է, որ 48-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով հստակ սահմանվել է, որ դիտորդն ընտրական հանձնաժողովի որոշումը, գործողությունը (անգործությունը) կարող է բողոքարկել միայն այն դեպքում, եթե գտնում է, որ խախտվել է իր՝ օրենսգրքով սահմանված իրավունքը: Այսինքն, տվյալ դեպքում ակնհայտ է, որ խոսքը բացառապես սուբյեկտիվ, այլ ոչ թե՝ օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտման մասին է, համապատասխանաբար, միայն սուբյեկտիվ ընտրական իրավունքի խախտման առկայության կանխավարկածն է դիտորդի մոտ ձևավորում ընտրական հանձնախողովների որոշման, գործողության (անգործությանը) դեմ պաշտպանություն հայցելու իրավունքը, իսկ վարչական մարմնի մոտ այդ իրավունքի պաշտպանության ուղղությամբ համարժեք գործողություններ, այդ թվում՝ պատշաճ վարչարարություն իրականացնելու և գործը լուծող ըստ էության որոշում կայացնելու պարտականությունը:*»:

ՎԴ/3989/05/17 վարչական գործով 04.06.2018թ. կայացված վարչական դատարանի վճռում նշված է. « (...) *ՀՀ ընտրական օրենսգիրքը Հայցվորների դիմումներում նշված օբյեկտիվ ընտրական իրավունքների խախտմամբ պայմանավորված պահանջ ներկայացնելու իրավունք չի սահմանում: Ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունները (անգործությունը) բողոքարկելու իրավունքի սուբյեկտային կազմը սահմանելով՝ այդ իրավունքի իրացման հնարավորությունը պայմանավորել է բողոքարկող սուբյեկտի իրավունքի պաշտպանության նպատակի առկայությամբ, այսինքն՝ տվյալ դեպքում, ընտրական հանձնաժողովի որոշումների բողոքարկումը նպատակ ունի իրականացնելու յուրաքանչյուր կոնկրետ սուբյեկտի՝ իր կարգավիճակով պայմանավորված, խախտված իրավունքի պաշտպանությունը:*»

ՎԴ/4076/05/17 վարչական գործով 09.07.2018թ. կայացված վարչական դատարանի վճռում նշված է. «*Ինչ վերաբերում է տեղամասային ընտրական հանձնաժողովների/ հանձնաժողովների նախագահների մյուս գործողությունների (անգործության) հետևանքով դիտորդների օբյեկտիվ ընտրական իրավունքների խախտումների վերաբերյալ հայցվորների փաստարկներին, ապա Դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են, քանի որ ՀՀ ընտրական օրենսգրքը չի նախատեսում հայցվորների կողմից վկայակոչված օբյեկտիվ ընտրական իրավունքների խախտմամբ պայմանավորված պահանջ ներկայացնելու դիտորդի իրավունքը:*»:

ՎԴ/3987/05/17 վարչական գործով 04.07.2018թ. կայացված վարչական դատարանի վճռում նշված է.

«(...) *Դատարանի գնահատմամբ ՀՀ Սահմանդրության և միջազգային պայմանագրերի վերոնշյալ իրավակարգավորումներից են բխում նաև օրենսդրի՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի առաջին մասով և նույն հոդվածի երրորդ մասի 3-րդ կետով սահմանած այն*

իրավակարգավորումները, ըստ որոնց, ի թիվս այլոց, դիտորդն ընտրական հանձնաժողովի որոշումը, գործողությունը (անգործությունը) կարող է բողոքարկել վարչական կամ դատական կարգով, եթե գտնում է, որ դրանով խախտվել է իր՝ սույն օրենսգրքով սահմանված իրավունքները, այսինքն՝ օրենսդիրը դիտորդի՝ ընտրական հանձնաժողովի որոշումը, գործողությունը (անգործությունը) բողոքարկելու իրավունքը պայմանավորել է բացառապես վերջինի՝ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված իրավունքների խախտման, այդ թվում նաև՝ ենթադրյալ խախտման փաստով:

Վերոգրյալով հերքվում է Հայցվորների ներկայացուցիչների՝ Հայցվորների օբյեկտիվ ընտրական իրավունքների խախտումները վիճարկելու իրավունքի խախտման փաստը, քանի որ օրենսդիրը՝ ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունները (անգործությունը) բողոքարկելու իրավունքի վերոնշյալ սուբյեկտային կազմը սահմանելով՝ այդ իրավունքի իրացման հնարավորությունը պայմանավորել է բողոքարկող սուբյեկտի իրավունքի պաշտպանության նպատակի առկայությամբ, այսինքն՝ տվյալ դեպքում ընտրական հանձնաժողովի որոշումների, գործողությունների (անգործության) բողոքարկումը նպատակ ունի իրականացնելու յուրաքանչյուր կոնկրետ սուբյեկտի խախտված իրավունքի պաշտպանությունը:»:

Վերոգրյալի հաշվառմամբ թիվ 11 տարածքային ընտրական հանձնաժողովը դիմումատուներին դիտել է հենց այդ կարգավիճակում՝ որպես հասարակական կազմակերպություն՝ դրանից բխող բոլոր հետևանքներով:

Ուստի, թիվ 11 տարածքային ընտրական հանձնաժողովի 25.06.2021թ. թիվ 06-Ա որոշումը՝ վարչական վարույթի հարուցումը մերժելու մասով՝ այն հիմնավորմամբ, որ դիմումատուները չեն հանդիսանում տարածքային ընտրական հանձնաժողովին հասցեագրված դիմում-բողոքում վկայակոչվող իրավունքների պաշտպանությամբ դիմելու իրավունք ունեցող իրավասու սուբյեկտ, իրավաչափ է: Ուստի, օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտումները վիճարկելու դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների իրավասուբյեկտության չճանաչման հիմնավորմամբ վիճարկվող որոշումն անվավեր ճանաչելու մասով դիմումը ենթակա է մերժման:

4. Դիմումում հղում է կատարվում նաև Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի 07.09.2010թ. ՍԴՈ-906 որոշմանը և ներկայացվում է հետևյալը. «Այսպես, ՀՀ Սահմանադրական դատարանի 07.09.2010թ. ՍԴՈ-906 որոշմամբ արձանագրվել է, որ քաղաքացիական հասարակությունն ինքնուրույն և պետությունից անկախ հասարակական մեխանիզմների և հարաբերությունների համակարգ է, որը պայմաններ է ապահովում կոլեկտիվների և անհատների մասնավոր շահերի և պահանջմունքների բավարարման համար: Հաշվի առնելով հասարակական կազմակերպությունների դերը պետության և քաղաքացիական հասարակության կյանքում, առաջնորդվելով վերջիններիս գործունեության արդյունավետության բարձրացման նկատառումներով՝ սահմանադրական դատարանը գտել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը շահագրգիռ (կանոնադրական համապատասխան իրավասությամբ օժտված) հասարակական կազմակերպությունների համար, որպես իրավաբանական անձ, կարող է սահմանել տվյալ ոլորտում անձանց խախտված իրավունքների համար դատարան դիմելու իրավունքի իրացման դեպքերը և կարգը՝ հաշվի առնելով actio popularis բողոքների ինստիտուտի առնչությամբ եվրոպական երկրների ներկա զարգացումների միտումները:»:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանն իր 2010թ. սեպտեմբերի 7-ի ՍԴՈ-906 որոշմամբ որոշել է «1. Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետի՝ «խախտվել» բառից հետո «նրա»

արտահայտությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:»:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի 07.09.2010թ. ՍԴՈ-906 որոշմամբ արտահայտված է նաև հետևյալ իրավական դիրքորոշումը. «... ուրիշի փոխարեն դատարան դիմելու իրավունքը գործում է սահմանափակ դեպքերում, նախատեսված է այն իրավիճակների համար, երբ այն անձը, որի իրավունքները խախտվել են կամ կարող են խախտվել, օբյեկտիվ պատճառներով չի կարող անմիջականորեն դիմել դատարան (օրինակ՝ անգործունակ կամ սահմանափակ գործունակ լինելը), կամ օրենսդիրը, հետապնդելով իրավաչափ նպատակ, այլ անձի կամ անձանց, հանրության խախտված իրավունքների պաշտպանությունը կանոնակարգում է հանրային գործառույթի և հանրային շահերի համատեքստում (օրինակ՝ հանցագործությունների կամ համայնքի սեփականության իրավունքի խախտման դեպքում): Բոլոր դեպքերում, ընդհանուր կանոնն այն է, որ դատարան դիմելու իրավունքը վերապահված է կոնկրետ այն անձին, ում իրավունքները խախտվել են կամ առկա է նրա իրավունքների խախտման վտանգ: **Բացառիկ կանոն է ուրիշի խախտված իրավունքների համար դատարան դիմելու իրավունքը, որի իրացման դեպքերի և կարգի սահմանումը բացառապես օրենսդիր մարմնի իրավասության հարց է:»:**

Սահմանադրական դատարանի 07.09.2010թ.ՍԴՈ-906 որոշմամբ արտահայտված է նաև հետևյալ իրավական դիրքորոշումը. «Բոլոր դեպքերում հիմնական մոտեցումն այն է, որ առանց իրավական շահի actio popularis-ը պետք է բացառվի:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ քաղաքացիական հասարակությունում հասարակական կազմակերպությունների գործառույթների իրականացման, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների միջոցով պետական կառավարման և տեղական ինքնակառավարման նկատմամբ հասարակական վերահսկողության արդյունավետության բարձրացման նկատառումներով հետագա օրենսդրական զարգացումները պետք է ընթանան վերոհիշյալ իրավական դիրքորոշումների հաշվառմամբ:»:

Ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասով օրենսդրի կողմից սահմանված սուբյեկտների կազմում հասարակական կազմակերպությունները՝ որպես ընտրական հանձնաժողովի որոշումը, գործողությունը (անգործությունը) բողոքարկող սուբյեկտ, սահմանված չեն:

Հաշվի առնելով Սահմանադրական դատարանի դիրքորոշումն առ այն, որ **«բացառիկ կանոն է ուրիշի խախտված իրավունքների համար» դիմելը** և որ դիմելու իրավունքի իրացման **«դեպքերի և կարգի սահմանումը բացառապես օրենսդիր մարմնի իրավասության հարց է»,** և վերլուծելով Ընտրական օրենսգրքի վերը նշված հոդվածները՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արձանագրելով, որ դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունները հանդիսանում են ընտրական իրավահարաբերությունների լիարժեք սուբյեկտ, միաժամանակ փաստում է, որ հասարակական կազմակերպությունների՝ Ընտրական օրենսգրքով նախատեսված իրավունքներն ամրագրված են Ընտրական օրենսգրքի 30-րդ և 31-րդ հոդվածներով և վերաբերում են դիտորդական առաքելություն իրականացնելու նպատակով հավատարմագրվելուն և դրանով պայմանավորված հարաբերություններին: Որևէ այլ իրավունք Ընտրական օրենսգրքով հասարակական կազմակերպությունների համար նախատեսված չէ:

«Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրյա պետությունների քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց (այսուհետ՝ ֆիզիկական անձ) և (կամ) իրավաբանական անձանց հասարակական միավորում է, որն ունի ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակ:»:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 4-րդ և 5-րդ գլուխների իրավանորմերի վերլուծությունից ակնհայտ է, որ քաղաքացիները և իրավաբանական անձինք հանդիսանում են իրավունքի ինքնուրույն սուբյեկտներ և չեն կարող նույնացվել մեկը մյուսի հետ:

Ակնհայտ է, որ որպես դիմումատու հանդես եկող հասարակական կազմակերպությունները հանդիսանում են իրավաբանական անձինք՝ իրավունքի ինքնուրույն սուբյեկտներ:

Թիվ 11 տարածքային ընտրական հանձնաժողովն իրավաչափորեն գտել է, որ ներկայացված դիմումով իրավաբանական անձ հանդիսացող հասարակական կազմակերպությունները դիմումով ներկայացված իրավունքների պաշտպանությամբ ընտրական հանձնաժողովի գործողությունը, անգործությունը կամ որոշումը բողոքարկող իրավասու սուբյեկտ չեն:

Ինչ վերաբերում է 2001 թվականի հոկտեմբերի 1-ից Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ մտած «Շրջակա միջավայրի առնչությամբ տեղեկության, որոշումներ ընդունելուն հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» Օրհուսի կոնվենցիային, ապա նշված կոնվենցիայի 9-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն.

«Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, վերը բերված կետ 1-ում և 2-ում հիշատակված դիտարկման ընթացակարգերից բացի և առանց դրանք խախտելու, որ հասարակության այն ներկայացուցիչները, որոնք համապատասխանում են ազգային օրենսդրության մեջ բերված չափանիշներին, եթե այդպիսիք գոյություն ունենան, մուտք դեպի վարչական կամ դատական ընթացակարգերը՝ վիճարկելու մասնավոր անձանց կամ պետական մարմինների այն գործողությունները կամ անգործությունը, որոնք խախտում են շրջակա միջավայրին առնչվող ազգային օրենսդրության դրույթները»:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն. «Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:»:

Նման պայմաններում կարևոր նշանակություն է ձեռք բերում այն իրավական հարցադրումը, թե «Շրջակա միջավայրի առնչությամբ տեղեկության, որոշումներ ընդունելուն հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» Օրհուսի կոնվենցիան արդյո՞ք օժտում է հասարակական կազմակերպություններին իրավասուբյեկտությամբ՝ սույն վեճով պայմանավորված բողոքարկման հարցում:

Օրհուսի կոնվենցիայի 9-րդ հոդվածի 3-րդ կետը հասարակական կազմակերպություններին նման իրավունք չի վերապահում: Համաձայն նշված իրավադրույթի յուրաքանչյուր Կողմ, այսինքն՝ պայմանագրի կողմ հանդիսացող պետություն, ապահովում է, որ հասարակության ներկայացուցիչները մուտք ունենան դեպի վարչական կամ դատական ընթացակարգերը՝ վիճարկելու մասնավոր անձանց կամ պետական մարմինների այն գործողությունները կամ անգործությունը, որոնք խախտում են շրջակա միջավայրին առնչվող ազգային օրենսդրության դրույթները: Այսինքն՝ տվյալ իրավադրույթը վերաբերում է կողմին՝ պետությանը, և դրանով այլ անձանց իրավունքների պաշտպանությամբ դիմելու ուղղակի իրավասություն որևէ սուբյեկտի համար սահմանված չէ: Հետևաբար, կարելի է փաստել, որ Օրհուսի կոնվենցիայի 9-րդ հոդվածի 3-րդ կետը հասարակական կազմակերպություններին չի օժտում իրասուբյեկտությամբ:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի 2000 թվականի դեկտեմբերի 26-ի «Շրջակա միջավայրի առնչությամբ տեղեկության, որոշումներ ընդունելուն հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին կոնվենցիայում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով» թիվ ՍԴՈ-269 որոշման 2-րդ կետով սահմանված է, որ Կոնվենցիայով Հայաստանի Հանրապետությունն ստանձնել է մի շարք

պարտավորություններ, մասնավորապես. «...ներպետական օրենսդրության շրջանակներում ապահովել արդարադատական համակարգի կամ անկախ և անաչառ մարմնի միջոցով կոնվենցիայով նախատեսված անձանց խախտված իրավունքների վերականգնման առավելագույնս հեշտացված հնարավորություն, ընդհուպ՝ արդարադատության մատչելիության ֆինանսական կամ այլ խոչընդոտների վերացման կամ նվազեցման համապատասխան համակարգի ստեղծումը»: Այսինքն՝ նշված որոշմամբ մեկ անգամ ևս փաստվում է, որ Օրհուսի կոնվենցիան հասարակական կազմակերպություններին ուղղակի իրավասուբյեկտությամբ չի օժտում, ավելին, նշված կոնվենցիայից նման պարտավորություն ուղղակի չի բխում, քանզի պետությունը պետք է «ներպետական օրենսդրության շրջանակներում ապահովի արդարադատական համակարգի կամ անկախ և անաչառ մարմնի միջոցով կոնվենցիայով նախատեսված անձանց խախտված իրավունքների վերականգնման առավելագույնս հեշտացված հնարավորություն»:

Մյուս կողմից հարկ է նկատել, որ «Շրջակա միջավայրի առնչությամբ տեղեկության, որոշումներ ընդունելուն հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» Օրհուսի կոնվենցիան վերաբերում է բացառապես բնապահպանական խնդիրներին, ուստիև այդ բնագավառում ծագող իրավահարաբերություններին, և նշված կոնվենցիայի իրավակարգավորումները անգամ տարածական մեկնաբանմամբ չեն կարող լինել կիրառելի ընտրական իրավահարաբերությունների նկատմամբ: Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 2004 թվականի դեկտեմբերի 15-ի՝ «Վարչական ակտերի նկատմամբ դատական վերահսկողության մասին» (2004)20 հանձնարարականը ևս կարող է առաջացնել պոզիտիվ պարտավորություններ պետության համար, սակայն այն չի կարող գնահատվել որպես իրավական ակտ, որն ուղղակի իրավասուբյեկտությամբ է օժտում բողոքաբերներին: Ավելին, նշված հանձնարարականը վերաբերվում է վարչական ակտերի նկատմամբ դատական, և ոչ թե վարչական վերահսկողության հարցերին, ինչը սույն դիմումի քննության առարկայի շրջանակներից դուրս է:

Վերոգրյալի հաշվառմամբ, Կենտորնական ընտրական հանձնաժողովը գտնում է, որ թիվ 11 տարածքային ընտրական հանձնաժողովի 25.06.2021թ. թիվ 06-Ա որոշումը՝ վարչական վարույթի հարուցումը մերժելու մասով՝ այն հիմնավորմամբ, որ դիմումատու հասարակական կազմակերպությունները չեն հանդիսանում տարածքային ընտրական հանձնաժողովին հասցեագրված դիմում-բողոքում վկայակոչվող իրավունքների պաշտպանությամբ դիմելու իրավունք ունեցող իրավասու սուբյեկտ, իրավաչափ է: Ուստի, դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների իրավասուբյեկտության վերաբերյալ դիմումում ներկայացված դիրքորոշման հիմնավորմամբ վիճարկվող որոշումն անվավեր ճանաչելու մասով դիմումը ենթակա է մերժման:

5. Միաժամանակ, դիմումում նշվում է, որ «դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունները ճանաչվել են ընտրական իրավահարաբերություննեի լիարժեք սուբյեկտ՝ օժտելով վերջիններին ընտրական գործընթացների ընթացքում արձանագրված մի շարք վարչական իրավախախտումների վերաբերյալ դիմել վարչական դատարան՝ համապատասխան անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու հիմքով, այդ թվում՝ ընտրական հանձնաժողովի գրանցամատյանը սահմանված կարգով չլրացնելու հիմքով:»:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ «Վարչական դատարանները քննում են՝

6) սույն օրենսգրքի 40.1-40.4 և 40.6-40.15 հոդվածներով նախատեսված դեպքերում վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու իրավասություն ունեցող

պետական մարմինների (պաշտոնատար անձանց) կամ համապատասխան ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների, համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի թեկնածուների կամ այդ ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև հանրաքվեի ժամանակ քարոզչության կողմերի հայցադիմումով:»:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 254-րդ հոդվածի 1-րն մասի 1-ին, 2-րդ կետերի և 3-րդ մասի համաձայն՝

«Վարչական իրավախախտում կատարելու մասին արձանագրությունը կազմում են վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունն իրականացնելու իրավասություն ունեցող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինները (պաշտոնատար անձինք), իսկ վարչական դատարանի իրավասությանը վերապահված հարցերով՝

1) սույն օրենսգրքի 40.1-40.4, 40.6-40.11, 40.13-40.15 հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով՝ իրավասու ընտրական հանձնաժողովը.

2) սույն օրենսգրքի 40.12, 166.1 և 183.1 հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով՝ համապատասխան պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարը. (...)

Սույն օրենսգրքի 40.1-40.4 և 40.6-40.15 հոդվածներով նախատեսված դեպքերում համապատասխան ընտրություններին մասնակցող կուսակցությունները, կուսակցությունների դաշինքները, թեկնածուները կամ այդ ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպությունները, ինչպես նաև հանրաքվեի ժամանակ քարոզչության կողմերը հայցադիմում են ներկայացնում անկախ իրավասու ընտրական հանձնաժողովի կողմից համապատասխան արձանագրություն կազմած լինելու կամ չլինելու հանգամանքից:»:

Նշված իրավադրույթների վերլուծությամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ վարչական իրավախախտում հանդիսացող ընտրական օրենսդրության խախտումների դեպքում վարչական դատարանի իրավասությանը վերապահված հարցերով, իրավասու ընտրական հանձնաժողովից բացի, ***համապատասխան արձանագրություն կազմելու իրավունք*** վերապահված է կոնկրետ սուբյեկտերին, այն է՝ ընտրություններին մասնակցող կուսակցությունները, կուսակցությունների դաշինքները, թեկնածուները կամ այդ ընտրությունների ժամանակ ***դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպությունները***, ինչպես նաև հանրաքվեի ժամանակ քարոզչության կողմերը: Օրենսդիրը հստակորեն օժտում է ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպություններին վարչական իրավախախտում հանդիսացող ընտրական օրենսդրության խախտումների դեպքում համապատասխան արձանագրություն կազմելու իրավունքով, ընդ որում, նույն իրավունքով դիտորդին չի օժտել:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գտնում է, որ իրենց դիտորդների հավատարմագրած հասարակական կազմակերպությունները ընտրական գործընթացների սուբյեկտներ են և կարող են դիմում ներկայացնել ***իրենց՝ որպես հասարակական կազմակերպությունների*** իրավունքների պաշտպանության վերաբերյալ հարցերով:

6. Ընտրական իրավահարաբերությունների սուբյեկտների իրավունքների վարչաիրավական կարգով պաշտպանության կառուցակարգերը սահմանված են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Ընտրական օրենսգրքով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն. «Առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները սահմանվում են օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:»: Նշված իրավանորմի հաշվառմամբ՝ Ընտրական օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ի մասում ամրագրված իրավանորմով սահմանված է. «Կենտրոնական և տարածքային ընտրական հանձնաժողովում վարչական վարույթն իրականացվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան, սույն օրենսգրքով սահմանված առանձնահատկություններով և ժամկետներում:»:

Վերոնշյալ իրավանորմերից բխում է, որ ընտրական հանձնաժողովներում վարչական վարույթի նկատմամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նորմերը կիրառելի են միայն Ընտրական օրենսգրքով սահմանված առանձնահատկությունների հաշվառմամբ:

Ի թիվս այլ առանձնահատկությունների, ընտրական հանձնաժողովներում վարչական վարույթի առանձնահատկություն է սահմանված Ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ պարբերությամբ, որի համաձայն՝ եթե բողոքը կամ դիմումը չի համապատասխանում նույն հոդվածի պահանջներին, ապա դիմումները չեն քննարկվում, դրանցով վարչական վարույթներ չեն հարուցվում, և ընտրական հանձնաժողովները որոշում են կայացնում վարչական վարույթի հարուցումը մերժելու մասին: Ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածով սահմանված՝ բողոքին կամ դիմումին ներկայացվող պահանջներից է դիմումը կամ բողոքը Ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված սուբյեկտների կողմից ներկայացնելու պահանջը:

Հիմք ընդունելով վերոգրյալը, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գտնում է, որ «Թրանսփարենսի Ինթերնեշնլ Հակակոռուպցիոն Կենտրոն» և «Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» հասարակական կազմակերպությունները չեն հանդիսացել թիվ 11 տարածքային ընտրական հանձնաժողով ներկայացված դիմումը ներկայացնելու իրավունք ունեցող սուբյեկտներ:

Ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ պարբերության համաձայն.

«Դիմումատուի վերաբերյալ տվյալներ չներառող կամ կեղծ տվյալներ ներառող դիմումները, իրավունքի չարաշահմամբ ներկայացված դիմումները, ոչ իրավասու անձի կողմից ներկայացված դիմումները, ինչպես նաև սույն մասի երկրորդ պարբերությամբ սահմանված պահանջների խախտմամբ ներկայացված դիմումները չեն քննարկվում, դրանցով վարչական վարույթներ չեն հարուցվում, և ընտրական հանձնաժողովները որոշում են կայացնում վարչական վարույթի հարուցումը մերժելու մասին: …»:

Վիճարկվող որոշման անվավերության ներկայացված հիմքերի ուսումնասիրությամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ նշված առաջին և երկրորդ հիմքերն ինքնին հանգեցնում են երրորդ հիմքի առկայությանը և, ըստ այդմ, երրորդ հիմքն առանձին չպետք է գնահատվի: Վերոգրյալը նշանակում է, որ դիմումատու հասարակական կազմակերպությունների իրավասուբյեկտությունը չի ճանաչվել Ընտրական օրենսգրքով սահմանված որևէ սուբյեկտի (բացառությամբ բուն հասարակական կազմակերպությունների) սուբյեկտիվ իրավունքների խախտման հիմքով դիմում-բողոք ներկայացնելու, ինչպես նաև առհասարակ օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտումները վիճարկելու տեսանկյունից:

Վերոգրյալի հաշվառմամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գտնում է, որ թիվ 11 տարածքային ընտրական հանձնաժողովի վիճարկվող որոշումը՝ դիմում-բողոքով վարչական վարույթի հարուցումը մերժելու մասով իրավաչափ է:

7. Սույն դիմումի քննարկմամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գտնում է, որ թիվ 11 տարածքային ընտրական հանձնաժողովի 2021թ. հունիսի 25-ի թիվ 06-Ա որոշումն իրավաչափ է հետևյալ պատճառաբանությամբ. թիվ 11 տարածքային ընտրական հանձնաժողովն իր որոշմամբ նշել է այն բոլոր էական փաստական հանգամանքները և իրավական հիմնավորումները, որոնք հիմք են հանդիսացել ընդունելու վիճարկվող որոշումը, այն ձևակերպված է հստակ և հասկանալի:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

«1. Անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝

ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով.

բ) կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա, կամ եթե ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ ըստ էության պետք է ընդունվեր այլ որոշում:»:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ տարածքային ընտրական հանձնաժողովը պահպանել է վարչական ակտին ներկայացվող «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 55-57-րդ հոդվածների և Ընտրական օրենսգրքի 47-49-րդ հոդվածների պահանջները:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը սույն դիմում-բողոքով հարուցված վարչական վարույթով առկա փաստերի ուսումնասիրմամբ հիմնավորված է համարում թիվ 11 տարածքային ընտրական հանձնաժողովի եզրահանգումները՝ վարչական վարույթի հարուցումը մերժելու մասով և գտնում է, որ ենթակա է մերժման դիմում-բողոքով ներկայացված պահանջը՝ անվավեր ճանաչել թիվ 11 տարածքային ընտրական հանձնաժողովի 25.06.2021թ. թիվ 06-Ա որոշումը:

8. Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գտնում է, որ ենթակա են մերժման դիմում-բողոքով ներկայացված պահանջները՝ «Ձեռնարկել միջոցներ՝ վերոգրյալ խախտումները արդյունավետ քննելու ուղղությամբ, համապատասխան սուբյեկտների իրավունքների խախտումների արձանագրման և դրանք, ըստ հնարավորության, վերացնելու ուղղությամբ, խախտումներ կատարած անձանց և դրանք արձանագրելու և վերացնելու համար պատասխանատու անձանց օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ», քանզի նշված պահանջներով բարձրացվում է օբյեկտիվ իրավունքի պաշտպանության հարց, ինչի իրավունքը դիմումատուներին վերապահված չէ:

Դիմում-բողոքով ներկայացված պահանջը՝ «ձեռնարկել միջոցներ խախտումներ կատարած անձանց և դրանք արձանագրելու և վերացնելու համար պատասխանատու անձանց օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ», նույնպես ենթակա է մերժման, քանի որ նշված պահանջը որևէ կերպ չի առնչվում դիմումատուների իրավունքներին, ինչով պայմանավորված, դիմումատուներն իրավասու չեն հանդես գալ նման պահանջով: Նշված հարցադրման վերաբերյալ դիրքորոշում է արտահայտել ՀՀ վարչական դատարանը ՎԴ/0929/05/15 վարչական գործի շրջանակներում կայացված որոշմամբ.

«... Դատարանը վերևում արդեն անդրադարձել է դիտորդների իրավունքներին, որոնք չեն ներառում նաև հանրային իրավախախտում թույլ տրված անձանց պատասխանատվության հարցով իրավասու մարմիններին դիմելու իրավունքը: Ինչպես նշվեց վերը, դիտորդներն

ընդամենը ներկայացնում են իրենց դիտարկումները ընտրախախտումների վերաբերյալ, իսկ դրանց հետագա գնահատումն ու ընթացքը դուրս է նրանց վերահսկողության շրջանակներից: Ըստ այդմ, դատարանն արձանագրում է, որ դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունը չի կարող պահանջել իրավասու ընտրական հանձնաժողովից համապատասխան գործողություններ՝ կապված վարչական կամ քրեական իրավախախտում կատարած անձանց պատասխանատվության ենթարկելու հարցի լուծման հետ:» (27.04.2015թ. ՎԴ/0929/05/15):

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Ընտրական օրենսգրքի 47-49-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» և Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ հասարակական կազմակերպությունների 25.06.2021թ. դիմում-բողոքը մերժել՝ թիվ 11 տարածքային ընտրական հանձնաժողովի 25.06.2021 թվականի թիվ 06-Ա որոշումը թողնել անփոփոխ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակելու պահից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ օրացուցային երեք օրվա ընթացքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Տ.Մուկուչյան**